

ՏԵՐ ՀԱՆԴ

ՍԵՆՏԵՆՏԻ  
ՄԻՇՆԲԷՎ,  
ԿՐԹԻԳԼԵՍԿԱԳԸ

633  
U-36

1/3

ԺԽԱԽՈՏԻ

# ԼՁՏԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

633  
U-36



18528

30 JUL 2013



**ԱՐԱՋԱՐԱՆ**

«Անցյալ տարի մուխտաբը խեղդեցրին միլիոնավոր հեկտար կոլտնտեսական բույսեր Մուխտաբը համենայն դեպս «աստծուց» չեն և վաշ ել կլիմայից, այլ առաջ են գալիս մեր գեղի գործը ունեցած խայտառակ վերաբերմունքի շնորհիվ: Վոչնչացնենք մուխտաբը շարքամիջյան տարածությունները խնամքով մշակելու, թեկերը մշակելու միջոցով, ազատված հողերը մաքուր վարելանոցի վերածելով: Ընկ. Յակովլևի ճամակից, ուղարկված Ազգատեխնիկային տիրապետելու կոնյեքիտակամ խորհրդակցությամբ:»

Հնգամյակի ավարտական տարին սոցիալիստական հրազործությունից, ինչպես նաև ծխախոտազործությունի պահանջում է լրիվ կատարել պլանը վոչ միայն քանակական, այլ և վորակական ցուցանիշներով:

Սրա մասին պարզ և համոզեցուցիչ կերպով ասում է Համամուխտաբեական 17-րդ և Յերկրային 7-րդ կուսակցությանների վորոշումները:

Հյուսիսային կովկասը, համատարած կոլեկտիվ առաջավոր յերկրամասը, այս տարի տնկում է 43.316 տար ծխախոտ կոլտնտեսային և անհատական, չքավոր միջակ անտեսություններում և 3.125 հեկտար՝ ծխախոտազործական խորհանտեսություններում:

Այդ խնդիրը ավելի հնարավոր է կազմակերպչապես և անտեսապես ամրացած կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների համար:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թվի փետրվարի 4-ի և Հյուս. կովկասի Յերկրային 1932 թվի փետրվարի 11-ի վորոշումը պարզ և վորոշակի ձևակերպում է կոլտնտեսությունների և կոլտնտեսային Ֆերմերի կազմակերպչակամ-տնտեսական ամրացման հիմնական մոմենտները, վորը ընտանաբար լիովին վերաբերում է նաև ապրանքային-ծխախոտազործական Ֆերմերին (ԱՄՑ):

1932 թվին ծխախոտատնկման պլանը կկատարվի այն դեպքում, յեթե այս խնդրի շուրջը մատնանշված վորոշման հիման վրա մորիլիզացիայի յենթարկվի բնժեներո-տեխնիկական աշխատավորները, բոլոր բանվորները և ծխախոտազործական խորհանտեսությունների ծառայողները, բոլոր խորհանտեսային ծխախոտազործ մասսայի, անհատական չքավոր-միջակ տնտեսությունների, բոլոր տեղական կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների, յերկրամասի ծխախոտազործական ուսյունների մամուլի ուշադրությունը:

Յերրորդ բոլշևիկյան զարնանը պետք է դիմավորել ծխախոտի դաշտերով, ամբողջ ուժով և լիովին պետք է վրձուել ծխախոտի արդյունաբերության հումույթային բազան ուժեղացնելու խնդիրը:

Միայն սոցիալիստական փոխադարձ ոգնության և ծխախոտազործական կոլտնտեսությունների և անհատական չքավոր-միջակ տնտեսությունների միջև սերտ կապ ստեղծելով հնարավոր կլինի վճուել այս կարեվոր տնտեսական-քաղաքական կամպանիան:

Մխախոտատնկման պլանի թե քանակապես և թե զորակապես կատարելը, ծխախոտի հումույթային բազան զարգացնելու և ամրացնելու, ծխախոտի բերքը և վորակը բարձրացնելու խնդիրները լուծելը—դա նշանակում է, վոր զադատում անկված ծխախոտը պետք է մշակվի իր ժամանակին և գյուղատնտեսական գիտության բոլոր պահանջները համաձայն, այսինքն, նրան ցույց պետք է արվի պետք յեղած դաշտային խնամք:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ  
8 39857

Ծխախոտի ժամանակին և անհրաժեշտ գաշտային խր-  
նածքը վճռական նշանակութիւն ունի ծխախոտի բերքա-  
ավութիւնը է վորակը բարձրացնելու համար:

Տունկից հետո, սա յերկրորդ պատասխանատու մոմենտն  
է՝ բարձր բերքի և վորակի, բերքի կորուստը պակասեց-  
նելու համար մղվող պայքարում:

Սա ապացուցվում է նրանով, վոր 1931 թվին քաղհանը  
ժամանակին չկատարելու պատճառով, յերկրամասում վոչն-  
չացավ մոտ 8000 հեկտար:

Ծխախոտի քաղհանի այսպիսի գրութիւնն անհանգուր-  
ժելի յե և ստիպում է մեզ ամեն ինչ նախատեսել, ճիշտ  
դասավորել ուժերը, պատրաստ լինել:

Ծխախոտի արդունաբերութիւնը պահանջում է և հույս  
ունի, վոր այն բոլոր խնդիրները, վորոնք կապված են  
ծխախոտի բերքը և վորակը բարձրացնելուն նպաստող դաշ-  
տային խնամքի, ծխախոտի հումուլթային բազայի զար-  
գացման և ամրապնդման հետ, լիովին կլուծվեն այն բոլ-  
շիկէջան տեղունութեամբ, յեռանդով և տեմպերով, վորպի-  
սին խորհուրդների յերկիրն իրավունք ունի պահանջելու  
ծխախոտագործութեան ասպարեզի բոլոր աշխատողներից:

Հասարակական հսկողութեան և ամենաանողոք ինքնաքն-  
նադատութեան յենթարկենք ծխախոտի հումուլթային բա-  
զայի զարգացման և ամրացման խնդիրները լուծող բոլոր  
կազմակերպութիւններին, ծխախոտախորհանտեսութեաննե-  
րի և ծխախոտակորտնտեսութեանների աշխատանքը:

Նախադատրաստվենք և սպառազինված դիմավորենք  
ծխախոտի դաշտային խնամքին:

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Բոլոր դաշտային բույսերի մեջ ծխախոտն այն ժա-  
կույթն է, վորն ամենից ավելի մեծ խնամք է պահանջում  
գաշտում աճելու և հասունանալու ժամանակ:

Դաշտում վատ խնամելու դեպքում՝ ծխախոտը թույլ է  
զարգանում, վերին աստիճանի շուտ է յենթարկվում ամեն  
տեսակ հիվանդութիւններին. այս դեպքում նրան զգալի  
վնաս են հասցնում վնասատուները, իսկ այս բոլորը միտ-  
սին զգալիորեն պակասեցնում են ծխախոտի բերքը և վա-  
տացնում նրա վորակը:

Կարելի չէ ուղղակի ասել, վոր ծխախոտի դաշտային  
խնամքի, մանավանդ քաղհանի աշխատանքները ժամանա-  
կին և լրիվ չկատարելն իջեցնելով բերքը, պակասեցնում է  
կորտնտեսութեան նյութական աղբյուրները և արդյունա-  
բերութեանն ու արտահանմանը չի տալիս պետք յեղած  
քանակով և վորակով հումուլթ:

1931 թվի փորձից մենք ունենք բազմաթիվ վերին աս-  
տիճանի փայլուն փաստեր, վորոնք մեր ասածը հտտա-  
տում են:

Նրանցից բերենք միայն ամենարնորոշները.—

Հյուսիսային ուսյնի կորտնտեսութիւնները 1931 թվին  
կորցրին մինչև 1200 հեկտար ծխախոտատունկեր, վորոնք  
վոչնչացան ժամանակին չքաղհանվելուց: Սաչու ուսյնի կու-  
տնտեսութիւնները կորցրին 700 հեկտարից ավելի, Դուր-

յուշի-կյուշի ուսումը—300 հեկտար, Աբխազի ուսումը—մինչև 1200 հեկտար և այլն:

Իսկ ընդամենը յերկրամասում չքաղհանվելուց փչացավ մինչև 8000 հեկտար ծխախոտատունկ:

Իրամի վերածելով, այս կորուստները հավասար են 5—6 միլիոն ուղբու հումուլթի:

Ուրիշ խոսքով, մենք զրկվեցինք մի շարք այն մեքենաներից, վոր մենք ներմուծում ենք արտասահմանից: Այլ խոսքով, մենք կապիտալիստական յերկրներին հումուլթի փոխարեն սվեցինք վորոշ քանակությամբ վոսկեղրամ:

Ջրաղհանելուց առաջացած ծխախոտատունկերի մեծ կորուստի գլխավոր պատճառը պետք է համարել հիմնականում ծխախոտի, մանավանդ ծխախոտատունկի աշխատանքները քաղհանի հետ ճիշտ գուգակցելուն անընդունակ լինելը:

Ծխախոտագործական ուսումները, տարվելով ծխախոտատնկման պլանի կատարումով, ուշ ձեռնարկեցին նրա քաղհանին, չկարողացան ժամանակին այս աշխատանքին արամադրել անհրաժեշտ քանակությամբ բանվորական ուժ:

Ինչպե՞րն այնքան եյին աղտոտվել, վոր միայն մոլախոտերից մաքրելու համար պետք յեղավ ծախսելու 50—60 մարդ-որ, փոխանակ սովորական 10—15 մարդ-որվա:

Հսկայական կորստների վերոհիշյալ փաստերը բավական համոզեցուցել կերպով ցույց են տալիս, վոր անհրաժեշտ է ընդհանրապես ուշադրությամբ խնամել ծխախոտը դաշտում, ժանափանդ խիստ կերպով պահպանել նրա քաղհանման ժամկետները:

Անցյալ տարի կոլտնտեսություններում աշխատանքի վատ կազմակերպումը բացատրվում է ծխախոտադաշտերում ուժերը ճիշտ դասավորելու անընդունակությամբ: Մանր-խմբակային և անհատական գործավարձի բոլորովին անբավարար կիրառումը, իսկ հաճախ, ընդհակառակն, գործավարձի քարզ ձևերով տարվելը, աշխատանքի վատ հաշվառումը, նրա սխալ գնահատումը (հավասարանք) առանց աշխատանքի վարակը հաշվառելու, հացը և արդյունաբերական ապ-

բանքներն ըստ շնչի բաժանելու սկզբունքը կիրառելով՝ կազմալուծեցին ծխախոտի աշխատանքները և խախտեցին աշխատանքային կարգապահությունը:

Ինչպե՞ս աշխատանքի տեմպն ուժեղ կերպով թուլացրեց կոլտնտեսականների, մանավանդ կոլտնտեսուհիների կուլտ-կենցաղային սպասարկման վատ կազմակերպումը դաշտում: Ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ մանկատներ, հրապարակներ և այլն չեյին կազմակերպվել, վատ էր կազմակերպված հասարակական սնունդը դաշտում և հաճախ կոլտնտեսականներն ստիպված եյին որակյան մի քանի անգամ գցել աշխատանքը և 5—6 կիրովետը հետո դնուլ տուն նախաճաշելու կամ ճաշելու:

Ապրանքա—ծխախոտային ֆերմերը և ծխախոտագործական բրիգադները պետք է իրենց արտադրական խորհրդակցություններում քննարկեն ծխախոտի վերաբերյալ առաջիկա աշխատանքը և, վերացնելով անցյալ տարվա թերությունները, լավ նախապատրաստվեն ծխախոտի քաղհանին, վերպետի ստանան ծխախոտի բարձր բերք և լավ վորակ:

Այս դրբուցիլի նպատակն է մոբիլիզացիայի յենթարկել ծխախոտագործական կոլտնտեսային լայն մասսաների ուշադրությունը՝ ծխախոտի դաշտային խնամքի հետ կապված բոլոր աշխատանքները ժամանակին և վորակապես լավ կատարելու հարցի շուրջը: Ծանոթացնել նրանց՝ ծխախոտի դաշտային խնամքի ագրոտեխնիկայի հիմնական կանոններին, իսկ գլխավորը, սրել ագրոտեխնիկական կազմի բրիգադների, ծխախոտագործական ասպարեզում բոլոր աշխատողների ուշադրությունը՝ ծխախոտի քաղհանը ժամանակին կատարելու և ծխախոտատնկումը քաղհանի հետ անպայման ճիշտ գուգակցելու անհրաժեշտության վրա:

«Աշխատանքի կազմակերպում» և «ծխախոտի վնասատուներն ու հիվանդությունները» բաժինները գրված են Ֆերիքի ծխախոտակոլտնտեսության ագրոնոմ ընկ. Գ. Գ. Սեյտակերի գի կողմից:

«Ծխախոտի դաշտային խնամքի նախապատրաստական աշխատանքները», «Յեղանակի և այլն վնասակար յերևույթները», «Հյուսիսային Կովկասի ծխախոտագործութեան կազմակերպումը և ազրոտեխնիկական սպասարկումը» և «Ներածութուն» բաժինները գրված են Հյուսիսային Կովկասի յերկային «Ծխախոտահումք» գրասենյակի գլխավոր հրահանգիչ ընկեր Ա. Տ. Միշարևի կողմից:

Մնացած բաժինները գրել և հենց նույն գրասենյակի գլխավորն էս ընկ. Ի. Յա. Կրուզյակովը:

### ԾԽԱԽՈՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Կարիք չկա խոսելու, թե ինչքան կարևոր է ժամանակին և լրիվ կատարել հիմնական աշխատանքներին նախապատրաստվելու բոլոր անհրաժեշտ աշխատանքները, քանի վոր բոլորը դիտեն, թե աշխատանքին խնամքով նախապատրաստվելը կիսով չափ վնասում է հենց այդ աշխատանքի հաջողությունները:

Թեև ծխախոտի դաշտային խնամքի, մտնավանդ քաղհանի աշխատանքը տեխնիկապես բարդ չէ, բայց շատաչ լինելու, ծխախոտատնկմանը և այլ շարքահերկ մշակույթների քաղհանին զուգահեռապես պտտառուով, նա մեծ ուշադրություն է պահանջում և, ծխախոտի բերքահամալիրը զուգընթաց, հանդիսանում է ծխախոտամշակման ամենապատասխանատու մասնատներից մեկը, յերկրամասի ծխախոտագործական կոլտնտեսութունների և մի ամբողջ շարք ծխախոտի ուսուցիչների համար:

Մրանից բղխում է նախապատրաստվելու հիմնական խնդիրը, վորը կայանում է աշխատանքի լավ նախամտածված կազմակերպման մեջ, բանվորական ձեռքերի պահանջը ժամանակին հաշվի առնելու, ուժերի ճիշտ դասավորման, կուրակենցադային սպասարկումը և նասարակական սնունդը կազմակերպելու մեջ:

Վերսկնեսե ծխախոտի վերաբերյալ յերկու պատասխանատու աշխատանքները—անկումը և քաղհանումը—իջենց տեվողությամբ համարյա զուգահեռապես են իրար, գրա համար էլ այդ աշխատանքներին պետք է ժամանակին նախապատրաստվել և ծխախոտի քաղհանման աշխատանքային ծրագիրը զուգահեռաբար պետք է կազմվի ծխախոտատնկման աշխատանքային ծրագրի հետ:

Իր որացույցային ժամկետով ծխախոտատնկումը տևում է համարյա մեկ ու կես ամիս և ծխախոտադաշտերի տաքին և յերկրորդ քաղհաններն անցկացվել են տնկման զուգընթաց:

Իհարկե, այս մտնար բարդացնում է թե պետ. ծխախոտագործարանների աշխատանքային ծրագիր կազմելու է թե այս ժամանակաշրջանի աշխատանքների որացույցային ժամկետները մշակելու աշխատանքը. այս յերկու աշխատանքները ճիշտ պետք է զուգահեռապես իրար:

Ծխախոտի դաշտային խնամքի աշխատանքային ծրագիրը պետք է արտացոլի հետևյալ մոմենտները:

1. Ծխախոտի քաղհանման, փխրացման, բուլկ լցնելու, ծաղկահատման, ֆիլիհատման աշխատանքները, այս աշխատանքների ժամկետները և նրանց կատարման կարգը:
  2. Այս աշխատանքները կատարելու համար պահանջվող բանվորական ձեռքերի ճիշտ հաշվառումը:
  3. Քաղող ուժի և ինվենտարի պահանջը:
  4. Բանուժի կազմակերպումը և դասավորումը դաշտում:
  5. Արտադրանքի նորմաների և բոլոր աշխատանքների գնահատումն աշխոտներով:
  6. Կոլտնտեսականների սննդի կազմակերպումը դաշտում:
  7. Մանկամուտներին և մանկահրապարակների կազմակերպումը, ավելի մեծ թվով կոլտնտեսուհիներին ազատելու համար:
  - 8) Բրիգադներին անկելու աշխատանքից քաղհանին և քաղհանից ծխախոտի հավաքմանն անցկացնելու կարգը:
- Բացի դրանից, այն ղեկավարում, յերբ ծխախոտադաշտերը գլուղեբից բավականին հեռու չեն, պետք է նախա-

տեսել կոլտնտեսականների համար անմիջապես դաշտում  
ոթեգժան կազմակերպելու գործը, վորի համար այսպիսի  
հողամասերում նախապես պետք է կառուցել պետքական  
ժամանակավոր շենքեր:

Անհրաժեշտ է նաև նախապես մշակել կուլտուրական  
սպասարկման հարցերը, քաղհանով զբաղվող կոլտնտեսա-  
կանների համար:

Անցյալ տարվա քաղհանի կամպանիայում խոշոր սխալն  
այն էր, վոր չափազանց անբավարար էլին ոգտագործվել  
շարքամիջյան տարածությունները մեքենաներով մշակելու  
հնարավորությունները, վորովհետև հին ծխախոտագործ-  
ների մեջ մինչև այժմ էլ տիրապետում է այն կարծիքը,  
վոր ձիաքարչ կուլտիվատորներով չի կարելի քաղհանի  
ծխախոտի շարքամիջյան տարածությունները:

Այս կարծիքը վոչ մի հիմք չունի, այդ մասին վկայում  
է այն փաստը, վոր անցյալ տարի, առանձին կոլտնտեսու-  
թյուններում և մանավանդ խորհանտեսություններում ծը-  
խախոտադաշտերի զգալի մասում շարքամիջյան մշա-  
կումը կատարվեց ձիաքարչ կուլտիվատորներով և մեծ  
չափով քանվորական ձեռքեր կրճատելով հանդերձ, միան-  
գամայն բավարար արդյունքներ ավեց:

Միախոտագործությանն սպասարկող վողջ աղբոտելի-  
նիկական կազմի, ծխախոտագործարանների վարիչների,  
ծխախոտագործ բրիգադների այս տարվա խնդիրն է 100  
տոկոսով ոգտագործել ծխախոտագործական կոլտնտեսու-  
թյուններում յեղած բոլոր կուլտիվատորները:

Յուրաքանչյուր ապրանքային ֆերմ, յուրաքանչյուր  
ծխախոտագործական բրիգադ այնպիսի հիմքերի վրա պետք  
է դնի շարքամիջյան տարածությունների մեքենայացված  
մշակումը, վոր ձեռքի գործիքներով մշակվեն միայն այն  
հողամասերը, վորոնք իրենց ցցված բարձրությամբ (լեռ-  
նային) անհարմար են՝ մեքենայով մշակվելու համար:

Իրա համար դեռ նախ քան քաղհան սկսելը, ամեն մի  
ծխախոտագործարան և բրիգադ իր ծխախոտադաշտերից

նախապես պետք է առանձնացնի այն հողամասերը, վորոնք  
յենթեպես չեն մեքենայի և ձեռքի խառն մշակման և այն  
հողամասերը, վորոնց վրա քաղհանը հնարավոր է միայն  
ձեռքի գործիքներով:

Մրա հիման վրա, նախապես ճիշտ հաշվի պետք է առ-  
նել անհրաժեշտ քանակությամբ կուլտիվատորներ և սապ-  
կաներ (շարքամիջյան տարածություններ մշակող ձեռքի  
գործիք), ինչպես նաև պարզել կոլտնտեսության ունեցած  
կուլտիվատորների և սապկաների քանակը, շտապ միջոցներ  
ձեռք առնել նորերը ստանալու և ավերվածները նորո-  
գելու:

Անպայման բոլոր մեքենաները և գործիքները նախա-  
պես պետք է փորձարկվեն: Յեղ յեթե կարիք զգացվի,  
սպա ծխախոտադաշտերի շարքամիջերը մշակելուն հար-  
մաբացնելիս, նրանց փխրացնող և կտրուղ մասերը պետք է  
փոխել: Անցյալ տարի կոլտնտեսությունների ունեցած բոլոր  
ձիաքարչ կուլտիվատորները մասամբ նորոգվելու կարիք զգա-  
ցին: Վերանորոգելու աշխատանքը շատ պարզ է և հաջողու-  
թյամբ կարող է կատարվել կոլտնտեսային դարբնոցներում:  
Կարեվոր է միայն շուտ յերեվան հանել այս մոմենտը և  
ժամանակին կատարել վերանորոգումը:

Վորովհետև ծխախոտադաշտերի շարքամիջյան տարա-  
ծությունների մեքենայով մշակումը նորություն է կոլտն-  
տեսանների համար, այդ պատճառով էլ կոլտնտեսական-  
ների նախապատրաստման հետ զուգընթաց, անպայ-  
ման պետք էլինի մտածել նաև այն մարդկանց պատրաս-  
տելու մասին, վորոնք առաջին անգամ պիտի աշխատեն  
կուլտիվատորներով:

Կուլտիվատորներով աշխատելու հաջողությունը զգալի-  
չափով կախում ունի նրանց հետ վարվելու ընդունակու-  
թյունից:

Իրա համար նախապես պետք է հոգալ այս աշխատան-  
քի համար անհրաժեշտ թվով կոլտնտեսականներին պատ-  
րաստելու համար:

Անհրաժեշտ է կամ հենց կոլանտեսուսթյան մեջ, յեթե դանվեն գործին տեղյակ ժարգիկ, կամ թե, Յերկրծխախոտակոլտնտմիության ռայոնական բաժանմունքին կից կազմակերպել հատուկ կարճատև դասընթացքներ՝ այս նըպատակի համար: Դասընթացքները կարող են 5—7 որյա լինել, բայց պետք է անպայման անցկացվեն բացառապես կոլանտեսուսականներին գործնականապես ծանոթացնելու ուղղությամբ այն կուլտիվատորներին, վորոնց հետ նրանք հետագայում պիտի աշխատեն:

Ծխախոտի խնամքին նախապատրաստվելու աշխատանքների վերաբերյալ պետք է ստեղծվուր բավական չե միայն նախապատրաստվելը, այլ շատ կարեվոր է և անպայման պարտադիր: կոլանտեսուսթյունների դեկավորների և վողջ անգրոտեխնիկական կազմի համար մշակել մանրամասնորեն նախապատրաստական բոլոր նյութերը կոլանտեսուսականների արտադրական խորհրդակցություններում, այն հաշվով, վոր հասցվի ամեն մի կոլանտեսուսականի, կոլանտեսուսու:

Ծխախոտի դաշտային խնամքում կոլանտեսուսյին լայն հատարակայնության ներգրավումը, աշխատանքի կազմակերպումը և ուժերի ձիշտ դասավորումը վճռում են ընդհանրապես յուրաքանչյուր կոլանտեսուսթյան աշխատանքի հաջողությունները: Իսկ ծխախոտի աշխատանքներում սա շատ կարեվոր է, վորովհետև նրանցով ահագին թվով մարդիկ են զբաղվում և մեքենայի կազմակերպված դերը դեռևս բացակայում է:

Ծխախոտագործական կոլանտեսուսթյան մեջ յուրաքանչյուր կոլանտեսուսականից պահանջվում է լարված ուշագրություն և ուժ, վորպեսզի ժամանակին հնարավոր լինի կատարելու բոլոր անհրաժեշտ աշխատանքները, վորովհետև ամեն մի չնչին մանրամասնության բաց թողնելը հեղափոխական կորուստ է սպառնում հումքի քանակի և վորակի մեջ և հետեվաբար, նյութակազմ մեծ վնաս է հասցնում

թե ամբողջ կոլանտեսուսթյանը և թե յուրաքանչյուր կոլանտեսուսականին:

Իրա համար բոլոր աշխատանքները հնարավորության չափով պարզ անհատական և մանր-խմբակային գործավարձի վերածելը ծխախոտի աշխատանքի պայմաններում հանդիսանում է աշխատանքի կազմակերպման հիմնական խնդիրը:

Շատ կարեվոր է նաև ծխախոտամշակության ագրոտեխնիկային տիրապետելը կոլանտեսուսականներ ի կողմից, վորպեսզի լիովին և բարեխղճորեն կատարվեն ծխախոտի դաշտային խնամքի վերաբերյալ յուրաքանչյուր աշխատանքի այն հիմնական մոմենտները, վորոնց բացառությանը մենք կանցնենք հետեվյալ գլուխներում:

## ԾԽԱԽՈՏԻ ԳԱՇՏԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Մարդկանց ձեռքով մշակվող բույսերի մեջ ծխախոտն այն բույսն է, վորն ամենից շատ խնամք է պահանջում դաշտում աճելու և հասունանալու ժամանակ:

Ծխախոտն այս ժամանակում շատ ող, լույս, շերմություն, սննդաբար նյութեր և պահանջում, ինչպես նաև նա շատ պահանջկոտ է հողի ֆիզիկական կազմակերպության վերաբերմամբ:

Ահա թե ինչու ծխախոտամշակման բոլոր աշխատանքներից կարեվոր նշանակություն ունեն խնամքի աշխատանքները դաշտում:

Ծխախոտի դաշտային խնամքը կամ դաշտային մշակումը բաղկացած է հետեվյալ աշխատանքներից:

1. Բաղահան,
2. Փխրացում:
3. Բուկը լցնելը:
4. Ծաղկահատում:
5. Տիրիչահատումը:

Այս տարի այս աշխատանքները մեծ նշանակություն են ստանում, վորովհետև ծխախոտի դաշտային խնամքի աշխատանքները կարեվորագույն և վճռական դեր են խաղում առատ և վորակով բարձր ծխախոտ օտանալու գործում:

Այս գլխի նպատակն է բացատրել այս աշխատանքների կատարման հիմնական մոմենտները և լարել ընթերցող-կուսակցականներին ուղղորդելու նրանց վրա, և հենց գրանով իսկ նպատակ, վորպեսզի նրանք գործնականորեն յուրացնեն ծխախոտի դաշտային խնամքի աշխատանքները ժամանակին և վորակապես լավ կատարելու ամբողջ կարողությունը:

### ԻՆՂՆԱՆ

«Հնգամյակի սվարսական տարում պատերազմ հայտարարենք մոլախոտերին»:

Մոլախոտը, իր անման և հասնունանալու շրջանում պահանջում է մոլախոտերի լիակատար բացակայություն:

Ժամանակին չվոչնչացված մոլախոտերը՝ անելով կարող են բոլորովին խեղդել ծխախոտի ժառանգ առևկերը, կանցնեցնել կամ խանգարել նրա նորմալ զարգացումը, վորովհետև նրանից խլում են մեծ քանակությամբ ուր, լույս, ջերմություն, սննդարար նյութեր և խոնավություն և, վերջապես, նպաստում են նրա տերևների մեխանիկական վոչնչացմանը քամի յեղած ժամանակ:

Մոլախոտերով խեղդված ծխախոտը վեր է ձգվում, բարականում, ուժասպառ է դառնում, դանդաղ է աճում և աղիս է բարակ և վոչ լրիվ զարգացած տերևներ:

Այս բոլոր բացատրությունները բավական փայլուն կերպով վկայում են այն հսկայական վնասների մասին, վոր պատճառում են մոլախոտերը, զգալիորեն պակասեցնելով ծխախոտի բերքը և իջեցնելով նրա վորակը:

Ահա թե ինչու ղեղին ծխախոտերի մշակման պրոտոկոնիկական կանոնները (տես №1 հավելվածը) 1932 թվին պահանջում են, վորպեսզի ծխախոտի առաջին քաղհանը կատարվի անկելուց վոչ ուշ, քան 10—15 օր հետո:

Այս ժամկետը շատ նպաստավոր է, քանի վոր այս ժամանակամիջոցում մոլախոտերը հեշտ և շուտ են վոչնչացվում:

Քաղհանի ամեն մի շնչին ձգձգումը առաջ է բերում բազմ հետևանքներ, վորոնք արտահայտվում են քերքի վորակական և քանակական կորստով:

Մոլախոտերի ասանձին տեսակները չափազանց սրագանձելով, մանավանդ անձրևոտ յեղանակներին, շատ շուտ ուժասպառում են ծխախոտը և բեղդում նրան:

Այսպիսի դրություն ակզի ունեցած անցյալ տարի ծխախոտագործական ուսյուններում ծխախոտի քաղհանի կամ պանիային, վորի պատճառով մեծ քանակությամբ ծխախոտ փչացավ:

Այդ դեռ քիչ է, ծխախոտի ուշ քաղհանն ունի նաև հետևյալ բացասական մոմենտները. որինակ, ուշանալու դեպքում քաղհանը դառնում է դանդաղ և դժվար կատարվելիք աշխատանք, վորը մի քանի անգամ ավելի շատ բանվորական ուժ է պահանջում, քան նորմալ ժամանակին կատարվող քաղհանը: Մոլախոտաուսյունների, ասանձին ծխախոտագործական ընկերությունների և ծխախոտարդիպաղների աշխատանքի լարված դրությունը, արդյունաբերությունը վորոշ թվով արտաքնացներ տալու անհրաժեշտության դեպքում՝ պահանջվում է խնայողարար, նպատակահարմար և պլանաչափ ոգտագործել բանուժը: Իսկ ծխախոտի քաղհանի ձգձգումը պատճառ է դառնում քանուժի ավելորդ վատման, առաջ է բերում ձեղքվածք կոլտեստություն կողմից մշակվող ծխախոտի և այլ բույսերի ֆրոնտում:

Բացի դրանից, բանուժի ավելորդ վատումը թանգացնում է ծխախոտի քաղհանման աշխատանքները, բնականաբար, վոչ թե իջեցնում, այլ ընդհակառակը, բարձրացնում է ծխախոտահումքից ստացվող միավորի ինքնարժեքը:

Բացի դրանից, մի շարք մոլախոտեր, ինչպիսին են՝ թայլը, մորմը, վյունդը, կուսուկը, հանդիսանում են ծխախոտի մի շարք հիվանդությունների և վնասատուների աղբյուրները: Իսկ մենք գիտենք, թե ինչ զգալի վնաս են հասցնում զանազան հիվանդությունները և վնասատուները ծխախոտարքերին՝ թե քանակի և թե վորակի տեսակետից:



Անա թե ինչու անհրաժեշտ է ծխախոտը քաղհանել վոր-  
քան կարելի յե շուտ:

Միախոտադաշտերում հատկապես տարածված են մուխա-  
տերի հետեյալ տեսակները. «շլիբիցա», «միշեյո», հասարակ  
սեզ, իսկ մի քանի հարավային ուայոններում ջրաբեր հողերի  
վրա—ձարխոտը:

Յեթի առաջինների դեմ լավագույն միջոցը հանդիսա-  
նում է նրանց կտրելը և հողի խոր փխրացումը, ապա ձար-  
խոտի դեմ, բացի այս միջոցներից՝ գործադրվում են նաև  
խորունկ հերկը և արմատների հավաքումը:

Քաղհանը ձեռքով կատարելիս գործածվում է կոլանտե-  
սականներին լավ ծանոթ ձեռքի բրիչը կամ թորխը:

Շարքերում առաջին քաղհանը խնամքով կատարելու հա-  
մար խորհուրդ է արվում գործածել փոքր փայտատ, վորն  
ազելի կարճ կոթ ունի, քան սովորաբար գործածվող փայ-  
տատները:

Պարզված է, վոր այսպիսի կարճ փայտատների գործա-  
ծումը ննարավորություն է տալիս մի ձեռքով բռնել փայ-  
տաքը, իսկ մյուսով բռնել բույսը:

Շարքերում այսպիսի փայտատով քաղհանը թեև ազելի  
զժվար և դանդաղ է կատարվում, բայց դրա փոխարեն, այս  
դեպքում ազելի քիչ քանակությամբ ծխախոտ է կտրվում և  
վոչնչանում:

Մենք այստեղ միայն չունենք նկարագրելու ուժերի դա-  
սավորումը քաղհանն անցկացնելու ժամանակ. դրա մասին  
կրթոսնք «Աշխատանքի կազմակերպման» բաժնում. ցույց  
կտանք միայն, վոր քաղհանն անցկացնելիս շատ կարևոր է  
պահպանել այս աշխատանքի վորակական ցուցիչները (Տես  
№ 3 հավելվածը):

Այսպես, սրինակ, չկտրել և չվնասել ծխախոտաբույսերի  
արմատները, հողից դուրս չքաշել մուխախոտերի և ծխախո-  
տատերեկների հետ միասին:

Առաջին յերկու քաղհանների անցկացումը պարտադիր  
պետք է հաժարել: Յերրորդ քաղհանն անպայման պետք է

անցկացվի դաշտը շատ ազատոված լինելու դեպքում, առա-  
ջին յերկու քաղհանները վատ կատարելու և ուրիշ այնպիսի  
պայմանների դեպքում, վորոնք պահանջում են յերրորդ  
քաղհան:

Որվա շոգ ժամերին չպետք է քաղհանել:

### ՓԽՐԱՑՈՒՄ

«Ուշ փերացնելը ձգձգում է ծխախոտի զար-  
գացումը և ուշացնում է նրա բերքահավաքը»:

Միախոտի քաղհանի, այսինքն դաշտը մուխախոտերից  
մաքրելու հետ միաժամանակ կատարվում է նաև հողի փրկե-  
րացումը (թորխումը):

Ինչհամե է կայանում հողի փխրացումը և ինչո՞ւ համար  
է նա կատարվում: Հողի փխրացումը կոչվում է աշխատան-  
քի այն պրոցեսը, վորը փխրացնում է հողի վերին շերտը  
7—8 սանտիմետրանոց մանր հողակոշտերի: Փխրացումը կա-  
տարվում է հենց նույն գործիքներով, ինչ վոր քաղհանի  
ժամանակ: Նշանակում է, վոր ծխախոտի քաղհանի համար  
պահանջվող գյուղատնտեսական գործիքները, այն է՝ տրակ-  
տորային, ձիաքարշ, ձեռքի կուլտիվատորները և թորխերը  
միաժամանակ և ծառայում են հողի փխրացմանը (թորխելուն):

Հենց նույն գործիքները գործածվում են նաև ծխախոտի  
բուկը լցնելու համար, վորի մասին մենք հետո կխոսենք:

Փխրացումը ժամանակին կատարելու և նրա ոգտակար  
լինելու մասին յերկար խոսելու կարիք չկա:

Մենք ցույց կտանք միայն հողի մշակման այն վիճակը  
խնդիրները, վորոնք լիովին լուծվում են հողի փխրացնե-  
լու միջոցով:

Փխրացված հողում հողը սննդաբար նյութերով հարսա-  
ցնող պրոցեսն ալելի ուժեղ տեմպերով է ընթանում, քան  
փխրացված հողում, և ալելի քիչ չափով են աճում մուխախո-  
տերը:

8398-53



Հողի փխրացման այս բարձր դրական կողմերը միասին փերցրած՝ նպաստում են ծխախոտի լավ աճմանը, այլ խոսքով, նպաստում են ավելի առատ և վորակով ավելի բարձր ծխախոտ ստանալուն:

Մենք արդեն ասացինք, վոր հողի փխրացման ժամանակը գուզադիպում է քաղհանին: Սովորաբար ծխախոտի աճման և հասունացման ամբողջ ժամանակաշրջանում հողը յերկու անգամ է փխրացվում, իսկ յերրորդ անգամ թեթև կերպով փխրացվում է միայն այն ժամանակ, յերբ յերրորդ քաղհանն է կատարվում:

Առաջին փխրացումը, անկախ նրանից, թե մոլախոտերը կլինեն թե վոչ, կատարվում է ծխախոտատնկուծից 10—15 օր հետո:

Առաջին փխրացման հիմնական նպատակն է, զգուշությամբ փխրացնել ծխախոտատնկերի կոտ գոնված հողն, վորովհետև վերջինս ջրելու պատճառով խոտանում է և կեղև է կապում:

Այս դրության մեջ ծխախոտի մատղաջ բույսի արմատիկները և ցողունը սեղմվում են և բացի այդ, ողբ արմատները և ընդհանրապես հողի մեջ քիչ է թափանցում և խանգարվում է նաև հողի ջրային սիստեմը, վորովհետև խոնավությունը կանոնավորապես չի գործընթանում և անձրևի ժամանակ պետք յեղած քանակությամբ չի թափանցում հողում:

Ասածներս արդեն բավական են պարզ գաղափար կազմելու համար այն խոշոր վնասի մասին, վորն առաջ է գալիս հողի խտանալուց և կեղև կապելուց:

Հետևաբար, կեղևը վոչնչացնող հողի փխրացումը մեծ ոգուտ է տալիս, վորը կարելի յե տեսնել ամեն տարի, ուշադրությամբ դիտելով ծխախոտի դաշտը նրա տնկման օրից:

Մանավանդ հաճախ, յերբ ծխախոտատնկուծը չոր է պարզ յեղանակին և կատարվում, այդ դեպքում ծխախոտով տնկված դաշտը մինչև առաջին փխրացումը դատարկ է յերեվում, իսկ ընդհակառակը, փխրացումից մի քանի օր հետո

նրանում պարզ ջոկվում են տնկված ծխախոտի կանանչ շարքերը:

Քանի վոր հողի փխրացումն արագացնում է ծխախոտի աճումը, ապա այն հաճախ ոգտագործում են բույսի աճումն հավասարեցնելու համար:

Ծխախոտի հավասարաչափ աճումը առաջացնում է տերևների հավասարաչափ հասունացումը, իսկ այդ նշանակում է վոր ծխախոտահավաքը ընթանալու յե հավասարաչափ, այսինքն չի պահանջում լրացուցիչ բանվորական ձեռք, վորպեսին նախատեսնված է պլանը կազմելիս:

Վորպեսզի հնարավոր լինի բույսի աճումը հավասարեցնել դրա համար հողը փխրացնելիս անհրաժեշտ է պահպանել միայն մի կանոն, վորի համաձայն առանց բույսի արմատները կտրելու՝ խնամքով խորը կերպով պետք է փրկարացնել թույլ զարգացող բույսերի կողքերը գոնված հողը:

Իսկ գործնականում սովորաբար հողը լավ է փխրացվում վոչ թե թույլ, այլ լավ զարգացող բույսերի մոտերքում:

Հողը պետք է զգուշությամբ փխրացնել, վորպեսզի տերևները չկտարվեն:

Ահա թե ինչու ավելի լավ է փխրացնել օրվա շոգ ժամերին, յերբ տերևները թառամած են լինում և կտրվելու քիչ յենթակա:

Ինչ վոր ասացինք, այն ել բավական է համոզվելու համար, վոր հողի ժամանակին փխրացումը վերին աստիճանի կարևոր է, վորովհետև նպաստում է ծխախոտի առատ և վորակով բարձր բերք ստանալուն:

Պետք է յուրացնել այս և չկրկնել անցյալ տարվա սխալները, յերբ տնկման անավարտ պլանում չեյին մտցված առաջին փխրացումը և վաղ տնկված ծխախոտերի քաղհանները:

Իսկ սա պատճառ դարձավ վոր մոլախոտերը խեղդեցին ծխախոտը 800 հեկտարի չափ, կամ վալյուտի վերածելով յերկրամասը կորցրեց մոտ 6.500 միլիոն ռուբլի:

«Ծխախոտի բուկն իր ժամանակին և ձիա  
լցնելը ծխախոտի բարձր բերքի և վորակի  
զբավականն է»:

Ծխախոտի բուկը ցնելը կատարվում է հողի փխրացման  
հետ միաժամանակ:

Ծխախոտաբույսի բուկը ցնելը նշանակում է նրա շուրջը  
դիզել քիչ քանակությամբ հող:

Ի՞նչ նպատակով և լցվում ծխախոտի բուկը:

Ամենից առաջ բույսի արմատները պահպանելու համար,  
վորոնք կարող են մերկանալ հողը փխրացնելու ժամանակ:

Նրանց վրա անմիջապես պառկող հողը չորանալուց դերձ  
պահելու և լրացուցիչ արմատա-ցողունների առաջանալուն  
նպաստելու համար:

Լրացուցիչ արմատները, իրենց հերթին, ուժեղացնում  
են սննդառությունը և բույսն ավելի դիմացկուն են դարձ-  
նում քամիների և հեղեղումների հանդեպ:

Ինչո՞ւ համար է ուժեղանում ծխախոտունիների սննդա-  
ռությունը լրացուցիչ արմատների առաջանալուց հետո:

Այս տեղի յե ունենում նրա համար, վոր բուկը ցնելու ժա-  
մանակ հողով ծածկված ցողունի մասից առաջացած լրացուցիչ  
արմատները տարածվում են հողի փուխը շերտում, վորտեղ  
ավելի արագ են կատարվում այն պրոցեսները, վորոնք նը-  
պաստում են հողում ծխախոտաբույսի համար սննդաբար  
նյութերի առաջացմանը և կուտակմանը:

Փորձը ցույց է տվել, վոր մատղաշ բույսն ավելի հեշտո-  
րեն է առաջացնում լրացուցիչ արմատները, քան հինը:

Արանից հեռուում է, վոր չպետք է ուշացնել բուկի լից-  
նելը:

Ծխախոտի բուկն անսպաժման պետք է լիցնել 2 անգամ:  
Առաջին անգամ յերկրորդ քաղհանի ժամանակ, յերկրորդ  
անգամ անկախ կամ յերրորդ քաղհանի ժամանակ: Բուկը  
լցվում է սովորաբար թորխերով (սապկաներով):

Շատ հաճախ առաջին քաղհանի ժամանակ բուկը չեն  
լիցնում, վորովհետև ծխախոտը նվազ աճած է լինում:

Իսկ յեթե այս ժամանակ բուկը լցվի, բույսը ծածկվում  
է հողով, վորպիսի հանգամանքը զգալի չափով ձգձգում է  
ծխախոտի աճումը, ընդհանուր դարգացումը. կարճ ասած,  
բացասականորեն է անդրադառնում ծխախոտի բերքի և  
վորակի վրա:

Թե բուկի ցնելը և թե հողի փխրացումը ոգտագործվում  
են, վորպես աճումը հավասարեցնելու միջոց, նշանակում է,  
ծխախոտի ընդհանուր դարգացման միջոց:

Այսպիսի հավասարեցման անհրաժեշտության մասին  
մենք արդեն մանրամասնորեն խոսեցինք փխրացնելու մա-  
սին գրված գլխում:

Այստեղ մենք միայն հիշեցնում ենք, վոր վիրոհիշյալ  
նպատակի համար նաև փխրացնելու դեպքում պետք է լից-  
նել թույլ դարգացող բույսերի բուկը, այլ վոչ թե ընդհա-  
կառակը:

ԾԱՂԱՆԱՏՈՒՄ

Ծխախոտը, ինչպես բոլորին հայտնի յե, մշակվում է  
կանոնավոր հասած և լավ վորակի տերևներ հավաքելու  
համար:

Այսպիսի տերևներ ստանալու միջոցներից մեկը հանդի-  
սանում է ծաղկահատումը կամ ծաղիկ ունեցող ցողունի վե-  
րին մասի կտրումը:

Ծխախոտի նորմալ աճման դեպքում ծաղկումը կատար-  
վում է նրանից հետո, յերբ ծխախոտաբույսը գոյացնում է  
բոլոր հիջնական տերևները, այսինքն, իր աճման վերջում:

Աննորմալ դարգացման պայմաններում (յերաշտ, միխա-  
նիկորեն զիսավելը և այլն) յուրաքանչյուր ծխախոտաբույս  
շատ շուտ է ծաղկում, յերբ դեռ բոլոր տերևները լիովին  
չեն հայտնաբերվել:

Այն ծաղկահատումը, վորը ժամանակին և ծխախոտի  
դարգացմանն ու աճմանը լիովին համապատասխան սպաժման-

ներումն և կատարվել, այդպիսի ծաղկահատումը նպաստում է ծանր քաշ ունեցող և լավորակ տերևներ ստանալուն, և մանավանդ լավանում է ծաղիկը, խոտեթյունը, փափուկեթյունը, առածգականությունը և այլն. այլ խոսքով, փամանակին և ճիշտ կատարված ծաղկահատումը բարձրացնում է բերքը, լավացնում է ծխախոտի վորակը:

Քիմիան, ուսումնասիրելով ծխախոտատերիվներին քիմիական բաղադրությունը, հաստատել է, վոր ծխախոտատերիվներին վորակը կախում ունի նրանից, թե տերիվների վոր նյութերի մեջ ավելի շատ են ածխաջրածինը և սպիտակուցը:

Սպիտակուցային կոչվում են իրենց քիմիական բաղադրությամբ բարդ այն նյութերը, վորոնք մեծ քանակությամբ գտնվում են մսում, ձվում և անասնական ու բուսական ծագում ունեցող ուրիշ տեսակի մթերքներում:

Ածխաջրածնային կոչվում են քիմիական բաղադրության այնպիսի նյութերը, ինչպիսին են՝ շաքարը, ոսլան և այլ նման նյութեր:

Ծխախոտատերիվների քիմիական վերլուծությունը լիովին հաստատեց այն, վոր ծխախոտի տերիվներն ինչքան շատ ածխաջրածին պարունակեն, այնքան ավելի լավ վորակ են ունենում և, ընդհակառակն, ինչքան շատ սպիտակուց պարունակեն, այնքան ավելի վատորակ են լինում:

Ծաղկահատումից հետո ծխախոտի տերիվները մեծանում են, ածխաջրածինը և սպիտակուցները շատանում են, իսկ թե նրանցից վորն է ավելի շատ կուտակվում—գա կախում ունի ծաղկահատելու ժամանակից:

Գիտական հետազոտական հիմնարկների, մասնավորապես կրասնոդարում գտնվող Համամիութենական Ծխախոտաարդյունաբերության Ինստիտուտի փորձերը գործնականորեն հաստատել են, վոր շուտ կատարված ծաղկահատումը, մանավանդ յերբ ծաղիկը նոր է յերևան դալիս—նըպաստում է տերիվների առատ բերք ստանալուն, բայց վորակը վատ է լինում և վատ է վառվում:

Իսկ յիթե վատ ծաղկահատումը վորնչացնի վերին մի քանի մատղաշ տերիվներ էլ, ապա բերքի վորակն ավելի ևս կվատանա և ավելի վատ կվառվի, իսկ քաշով տերևների քանակը կավելանա:

Ուշ ծաղկահատումը—յերբ բույսի վրա ծաղկափթթումը լիովին զարգացել է և դոյացել են սերմի բազմաթիվ արկղներ—պակասեցնում է բերքը, բայց լավացնում է վորակը և վառվելու ընդունակությունը:

Արգավանդ հողում, այսինքն այնպիսի հողում, վոր հարուստ է սննդարար նյութերով, ավելի լավ է բուրդովին ծաղկահատում չանել, քանի վոր լիովին ապացուցված է, վոր այս դեպքում տերիվները կոշտ հատկություն չեն ունենում, և հետո ծխախոտաարդյունաբերության այս տարում ամենայն հավանականությամբ կատարվելու յե սերմերի մթերումը, յուղ պատրաստելու համար:

Սերմամթերման մասին կխոսենք ներքեվում, «Հավելված» բաժնում: Իսկ այժմ միայն նկատենք, վոր այն բոլոր հողերում, ուր չծաղկահատված ծխախոտը վորակով լավ է լինում, կարիք չկա ծաղկահատում կատարել:

Ծեր սոսոսներից հետեվում է, վորբ ծաղկահատումը բավականաչափ լավ միջոց է, թե քանակապես և թե վորակապես լավ բերք ստանալու համար:

Սակայն, վորպեսզի վորոշել, թե յերբ և ինչպես կատարել ծաղկահատումը, դրա համար պետք է հաշվի առնել հողի արգավանդությունը և այլ յուրահատկությունները, յեղանակի դրությունը ծաղկահատման ժամանակ, մշակվող ծխախոտի ամեն տեսակի յուրահատկությունը, վորը պահանջում է ծխախոտի լավ վորակը և այլն:

Հետևաբար պետք է փորձառություն ունենալ և գիտակցորեն վերաբերվել ծխախոտի մշակման բոլոր պրոցեսներին, վորպեսզի ծաղկահատումը իսկապես կատարվի նպատակահարմար յեղանակով, այնժամանակ, յերբ նա լիովին կնպաստի առատ և բարձրորակ բերք ստանալուն:

Մենք անհրաժեշտ ենք համարում մասնացույց անել

ծխախոտի ծաղկահատման ժամանակը և կանոնները նրա մեծացնելու հիմնական առանձին մոմենտներում:

Այսպես, այն ծխախոտը, վորը մշակվում է շատ արդավանդ հողում, չպետք է ծաղկահատել, յեթե վախ կա ուշացնել բերքահավաքը և չթողնել ծխախոտը աշնանային ցրտին, յերբ յերեվան են գալիս Նասած սերմ-արեղիկներ: Ըստ վորում, ծաղկահատելու փոխարեն մեկ յերկու տերեվից ավելի չպետք է կտրել:

Նվազ արգավանդ (թույլ) հողում ծխախոտ մշակելու դեպքում, տերեվի խոռոթյունն ավելացնելու նպատակով մինչև լիակատար ծաղկումը պետք է ծաղկահատել, կտրելով վերելի 4 կամ ավելի ծաղկած տերեվներ:

Բերված մոմենտներից յերեվում է, վոր ծաղկահատման ժամանակի և բնույթի վրա ազդում է հողի արագավանդությունը, այսինքն նրանում գանվող սնդարար նյութերի քանակը:

Յեղանակի դրությունը և բնույթը նույնպես ազդում է ծաղկահատման վրա, ինչպես որինակ, բուռն կերպով աճեցնող խոնավ ամուսն ծխախոտը պետք է ծաղկահատել, յերբ նա ամբողջովին ծաղկի, այս դեպքում կտրելով միայն 1—2 վերելի փոքր տերեվներ:

Չոր ամուսնը, անկախ հողի բնույթից, յեթե մոտարուտ անձրևի հույս չկա, պետք է ծաղկահատել ավելի շուտ, այս դեպքում միանգամից կտրելով մի քանի վերելի տերեվներ:

Վաղ ծաղկահատումը, վերելի 3—4 տերեվների կտրումով, արագացնում է ծխախոտատերեվների հասունացման պրոցեսը և, հետևաբար բերքահավաքը, վորն ոգտագործվում է ուշ տնկված ծխախոտը շուտ վրա հասնող աշնանային ցրտերից ազատելու համար:

Ուշ տնկված ծխախոտի շտապ ծաղկահատումը, մանավանդ անձրևից քիչ առաջ, վնաս է բերում և վոչ թե ոգուտ:

Այս դեպքում ծխախոտի վորակն ավելի յե իջնում, քան յեթե ծխախոտը ծաղկահատված չլիներ, իսկ քանակի տեսակետից քիչ է ավելանում:

Սովորաբար, այսպիսի պայմաններում, պետք է ծաղկահատել այն ժամանակ, յերբ վերելի բոլոր տերեվները զարգանում են և ծաղկահատելիս կտրել միայն մի ծաղիկ, ստանց կտրելու վերելի վոչ մի տերեվ:

Մի քանի խոսք էլ ծաղկահատման աշխատանքի մի քանի ձևերի մասին: Վաղ և միջակ վաղ ծաղկահատման դեպքում, յերբ ծաղիկները նոր են, նրանք հեշտությամբ են փետվում, ավելի զարգացած ծաղիկները կտրվում են:

Վերջին դեպքում, մանավանդ յերբ ծաղիկները ծերացել են և կարծրացել, ծաղիկի ցողունը ձախ ձեռքի ցուցամատով և բթամատով ամուր սեղմելով, պետք է արագությամբ և ուժեղ կերպով մի կողմ ձեռել այնպես, վոր կողքի թարմ, նուրբ տերեվները չվնասվեն, վորոնք այս ժամանակ մանավանդ կաշուն են և դյուրությամբ են ձեռքին կաշում:

Ինչպես յերեվում է, ծաղկահատման տեխնիկան շատ պարզ է. աղելի բարդ է այն հարցը, թե յերբ և ինչպես պետք է կատարել ծաղկահատումը. չանա այս վերջինն է, վոր պետք է մանրամասն ուսումնասիրվի ծխախոտագործարանների ընկերության յուրաքանչյուր վարիչի, ծխախոտագործական բրիգադների յուրաքանչյուր բրիգադիերի և կոլտնտեսականի կողմից:

Յուրաքանչյուր առանձին դեպքում, ծխախոտի ծաղկահատման հարցը ձիշտ լուծելու նպատակով անպայման պետք է դիմել ազրոտեխնիկական կազմին:

### ՖԻԼԻՉՍԱՏՈՒՄ

Ծաղկահատում կատարելուց հետո, յուրաքանչյուր ծխախոտարույս սկսում է բուսցնել կողմնակի հյուղեր, վորոնք կոչվում են ֆիլիչներ:

Ֆիլիչներն առաջ են գալիս և զարգանում են կոկոններից, վորոնք գտնվում են տերեվների խոռոչում, այսինքն տերեվի և ցողունի միացման տեղում: Բոլոր ֆիլիչները, վորոնք բաժանվում են զլխավոր ցողունից, կոչվում են առաջին սեռի յերկրորդական հյուղեր կամ ֆիլիչներ:

Նրանց վրա, տերեւները փոսերից դոյանում են յերկ-  
բորդ սեռի ֆիլիչները: Յերկրորդական ճյուղերը կամ ֆի-  
լիչները լինում են զանազան բնույթի և յերկարության:  
Այսպես, որինակ, ցողունի վերին մասի ֆիլիչներն ավելի  
շուտ են յերեվան գալիս, ավելի շուտ են ծաղկում, ավելի  
կարճ են և ունեն ավելի քիչ թվով տերեւներ, քան ցո-  
ղունի վարի մասի ֆիլիչները:

Իսկ վարի մասի ճյուղերը, ընդհակառակը, ավելի ուշ  
են հայտնվում և ծաղկում, ավելի յերկար են և ավելի մեծ  
քանակութեամբ տերեւներ ունեն, քան վերի ճյուղերը:

Ծխախոտի առատ և լավորակ բերք ստանալու համար  
ծխախոտարույսի զարգացման վորոշ մոմենտին կատարում  
են այսպես կոչված ֆիլիչահատում, այսինքն ֆիլիչների  
հեռացում:

Ֆիլիչահատման դերը ծխախոտի բերքը բարձրացնելու  
և վորակը լավացնելու գործում համարյա նույնն է, ինչ  
վոր ծաղկահատման դերը:

Ֆիլիչահատումը նույն աղղեցությունն է անում ծխա-  
խոտատերեւի սպիտակուցային և ամխաջրածնային նյու-  
թերի պարունակության և նրանց փոխհարաբերության վը-  
րա, ինչպես անում է ծաղկահատումը:

Ճյուղերը ժամանակին և ճիշտ կտրելու դեպքում (ինչ-  
պես նաև ժամանակին և ճիշտ ծաղկահատման դեպքում)  
յուրաքանչյուր ծխախոտարույսի վրա, բացի տերեւների  
գերածուծից, նկատվում է նաև ամխաջրածնի քանակի  
ավելացումը, այսինքն այն նյութերի ավելացումը, վորոնք  
լավացնում են ծխախոտի վորակը:

Վորպեսզի ճիշտ և ժամանակին կատարվի ծաղկահա-  
տումը, զրա համար անհրաժեշտ է իմանալ դիտության և  
պրակտիկայի կողմից հաստատված հետեւյալ դրություն-  
ները:

Մատղաշ ճյուղերն իրենց զարգացման համար ավելի  
շատ սպիտակուցային նյութեր են գործածում, քան խոշոր,  
կարճ ճյուղերը:

Իսկ մեծ ճյուղերը (ֆիլիչները) ավելի շատ ամխաձին  
են գործածում, մանավանդ ոսլա, այսինքն այնպիսի նյու-  
թեր, վորոնք լավացնում են ծխախոտի վորակը:

Նշանակում է, յեթե հեռացնենք խոշոր ֆիլիչները և  
թողնենք մատղաշները (մանրերը), ապա վերջիններս ծխա-  
խոտարույսը տալիս է իր տերեւների հաշվին զգալի քանա-  
կութեամբ սպիտակուցային նյութ, այլ կերպ ասած, ծխա-  
խոտի տերեւների վորակը լավանում է:

Շատ արգավանդ հողում խորհուրդ չի տրվում ծաղկա-  
հատում կատարել, բայց ավելի ուշ ֆիլիչահատումն ան-  
պայման պետք է կատարել, վորպեսզի ստացվի նվազ կոշտ  
հատկություն ունեցող ծխախոտ:

Յեթե ֆիլիչահատում չկատարվի, ապա ծխախոտի հիմ-  
նական վերևի տերեւները դանդաղ են զարգանում և հասու-  
նանում, վորովհետև նրանք ոսլայից աղքատ են լինելու:

Ֆիլիչահատման ժամանակը և բնույթը կախում ունեն  
իրենց հերթին հենց նույն պայմաններից, ինչ վոր ծաղ-  
կահատումը:

Յյա պայմանների մասին մենք վերևում ասացինք:  
Գիտական վորձերը և պրակտիկան ապացուցել են, վոր  
շատ արգավանդ հողում ֆիլիչահատումը չպետք է շտապեց-  
նել, լավ է կատարել այն ժամանակ, յերբ ֆիլիչները 10  
սանտիմետրից ավելի յեն զարգանում:

Քիչ պտղաբեր հողում, ընդհակառակը, ֆիլիչահատումը  
պետք է կատարել վորքան կարելի յե շուտ և ավելի մաքուր:

Խոնավ յեղանակին ֆիլիչահատումը պետք է կատարել  
ավելի շուտ, այսպես տերեւները թեև խոշոր են լինելու, բայց  
կարող են թեթևաքաշ, վատ հասունացող և վատորակ լինել:

Չոր յեղանակին ճյուղերն իսկույն պետք է հեռացնել  
իրենց հայտնարբերելու քանակի համաձայն, հակառակ դեպ-  
քում վատ տեսակի ծխախոտ է ստացվում:

Ուշ անկված ծխախոտի ֆիլիչահատումը չպետք է ուշաց-  
նել, առավել ևս յեթե վտանդ կա, վոր ծխախոտը աշնանա-  
յին կանուխ ցրտերին կենթարկվի:

Մատղաշ փոքր ճյուղերը կտորվում են բթամատով, ճյուղը տերևի ծոցում բռնելու և մի կողմ ծռելու միջոցով:

Պոշոր և ավելի ծերացած ճյուղերը հեռացվում են ցուցամատով և բթամատով, իսկ կարծրացած ճյուղերը կտորվում են այնպես, ինչպես ծաղիկները (վերևի սասերը):

Կտորված ֆիլիչները, ինչպես նաև կտորված ծաղիկները չպետք է թողնել ծխախոտի տերևի վրա, վորովհետև նրանք կարող են իբրև աղբյուր ծառայել ծխախոտատերևի հիվանդուլթյունների համար դաշտում:

Հմտությամբ և ժամանակին կատարվող ֆիլիչահատումը բավական լավ միջոց է՝ բերքի բարձրացման և վորակի լավացման համար (տես №№ 1, 2, 3 հավելվածները):

Ամեն մի ծխախոտագործ կոլտնտեսական պետք է տիրապետի նրա տեխնիկային, վորպեսզի միանգամայն խելացի և ձիշտ կիրառելով ֆիլիչահատումը, բարձրացնի ծխախոտի բերքը և վորակը:

## ԾԽԱԽՈՏԻ ԴԱՅՏԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԲԵՆԱՅԱՑՈՒՄԸ

«Տեխնիկայի հրաշքերը առաջի հերթին պետի գործադրվեն վերափոխելու ամենահետաձուգ արտադրությունը— յերկրագործութունը, վոր ամենահասարակածն է և ամենից շատ է զբաղեցնում մարդկանց»:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Ծխախոտամշակման առանձին պրոցեսներին, մասնավորապես շաքարամիջյան տարածությունների մշակման մեքենայացումը զլխավոր միջոց է հանդիսանում աշխատանքի արտադրողականության առավելագույն բարձրացման համար:

Այսպես որինակ, Տե. Ա. Չուբկովի «Թուրքական գլանակային ծխախոտի մշակման, բերքահավաքի և չորացման դեկավարությունը» գրքի տվյալներից յերևում է, վոր ձիաքարը կուլտիվատորների գործադրումը ծխախոտի քաղհանի

համար 1 հեկտար տունկին պակասեցնում է բանուլթի վատնումը մոտավորապես 2 անգամ:

Յիթե շաքարամիջյան տարածություններն այն տեսակ են, ինչպիսին վոր անցյալ տարի ծխախոտատնկման ժամանակ գոյություն ունեյին, այսինքն իրարից 50—55 սմ. հեռու, ապա ձիաքարը կուլտիվատորներով դժվար է լինում մշակել շաքարամիջյան տարածությունները:

Վոչ միայն ձեռքի, ձիաքարը, այլ նաև տրակտորաքարը կուլտիվատորներ գործադրելու նպատակով, դեղին ծխախոտի մշակման ագրոտեխնիկական կանոնները 1932 թվի համար սահմանել են ծխախոտատնկման դեպքում 60 սմ. շաքարամիջյան տարածություն:

Իհարկե այս կամ այն տեսակի կուլտիվատորով միջշաքարային տարածությունները մշակելով, ձեռքի թորելներով մշակումը դուրս չի ձգվում, վորովհետև շաքարում քաղհանն ավելի շուտ պետք է կատարել, քան միջշաքարայինների մշակումը, վորպեսզի փխրացված հողը չկոխկուլտի:

Միանգամայն պարզ է, վոր շաքարամիջյան տարածությունները թե ձեռքի գործիքներով և թե մեքենաներով մշակելիս՝ պետք է հետևել վոր գործիքները միանգամայն պետքական լինեն քաղհանի, փխրացման և բուկը լցնելու համար:

Այս գործիքներն աշխատեցնելու համար այնպես պետի նախապատրաստվեն, վոր աշխատանքը կատարվի վորակական ցուցիչներով (տես № 3 հավելված):

Տրակտորաքարը և ձիաքարը կուլտիվատորները հաջողությամբ կարելի յե գործադրել ամեն տեսակի հողի համար: Չեռքի «պլանտի» № 8 կուլտիվատորը հաջողությամբ կարելի յե գործադրել թեթև հողերի համար, վորոնք ծխախոտատնկումից առաջ լավ մշակված են:

1931 թվի նոյեմբերի 24-ին Մոսկվայում տեղի ունեցած ծխախոտի և մախորկայի մշակումը մեքենայացման յենթարկելու շուրջը կայացած առաջին համամիութենական համագումարը, ծխախոտի շաքարամիջյան մշակման հարցի վերաբերյալ ընդունեց հետևյալ վորոշումը:

Շարքամիջյան հողամշակման վերաբերյալ համազու-  
ժարը գտնում է, վոր ամենաարդյունավետ շարքա-  
միջյան հողամշակումը կլինի այն դեպքում, յերբ նա  
կատարվի ծխախոտի զարգացման վաղ շրջանում (40—50  
սմ. վոչ ավել հասակում): Փորձը ցույց է տվել, վոր 50  
սմ. բարձր ծխախոտը, անցնելով շարքերում ՇԹ տրակ-  
տորի տակից, ծավում է, բայց չի վոչնչանում, վորպիսի  
հանգամանքը հնարավորութուն է տալիս շարքամիջերի  
հողամշակումը մեքենայացնելու:

Իսկ 80 սմ. բարձրությամբ ծխախոտը տրակտորի շար-  
ժումից վոչնչանում է:

Համազումարն անհրաժեշտ է համարում անցկացնել 4  
միջշարքային մշակում, վորից 2-ը իրրև կանոն:

Շարքամիջյան հողամշակման համար հարմար են մեքե-  
նայաքարը հետևյալ գործիքները. — «Կարմիր Ակսայի» № 408  
ժանր տրակտորաքարը կուլտիվատոր՝ լեռնային ուսյունների  
համար, իսկ «Կարմիր Ակսայ» գործարանի № 8 կուլտիվա-  
տորը և 3 մետրանոց «Ուկրայինկան» — տափարակ վայրե-  
րի համար:

Միջշարքային հողամշակման համար ձիաքարը գործիք-  
ներից ամենահարմարն է Ջեվետսկու կուլտիվատորը, իսկ  
ՈԹՅ-ը Ղրիմի լեռնային ուսյունների համար»:

1931 թվին Կուրջինի ծխախոտագործական խորհրդանո-  
սությունում մասնագետ ընկ. Իվանովը փորձարկեց տրակ-  
տորաքարը կուլտիվատորներ՝ 1) «Կարմիր Ակսայ» գործա-  
րանի № 8 և 2) ՄՔՄՔՄ № 408 «Կարմիր Ակսայ» գործարանի  
կուլտիվատորը:

Փորձի արդյունքները ցույց տվին, վոր. —

1. Կուլտիվատոր № 8 պետքական է միայն հավասար  
մակարդակ ունեցող դաշտի միջշարքային հողամշակման հա-  
մար, յեթե ծխախոտի բարձրությունը 40—50 սմ. ավել չի:

75—85 սմ. բարձրությամբ ծխախոտի շարքամիջյան  
հողամշակման, այսինքն յերկրորդ քաղհանի համար կցման

շրջանակի և կուլտիվատորի շրջանակի նվազագույն բարձ-  
րությունը պետք է լինի 50 սմ. վոչ պակաս:

2. Կողքի դանակներն ամրացնելու համար բրուսը պետք  
է գտնվի անիվի առաջ, իսկ կտրող թաթիկը՝ շրջանակի  
յետևի մասում:

3. Կուլտիվատոր № 8, իր ներկա կառուցվածքով բոլորո-  
վին անպետք է միջշարքայինների մշակման համար նույն-  
իսկ քիչ թեք նախալեռնային ուսյուններում:

4. Կուլտիվատոր ՄՔՄՔՄ № 408 կարող է ոգտագործ-  
վել 60 սմ. հեռավորություն ունեցող շարքերի համար  
հողի հարթ լինելու դեպքում և նախալեռնային ուսյունների  
պայմաններում, և պետք է ամբողջացվի հետևյալ քանակու-  
թյամբ բանուկ մասերով.

1. Կտրող թաթիկ 220 մմ. բռնելու կարողությամբ 12 հատ
2. Փխրացնող լայն խոփիկներ . . . . . 23 »
3. Կարճ կրոնշտեյններ . . . . . 6 »
4. Յերկար » . . . . . 2 »
5. Անիվի հատուկ կրոնշտեյններ . . . . . 2 »

Բացի դրանից, պետք է կատարվեն մի քանի փոփոխու-  
թյուններ, որինակ, պետք է փոխվեն կրոնշտեյնը պաշտ-  
պանող մասերը և այլն:

Փորձի բոլոր արդյունքներն ասում են, վոր տրակտո-  
րային կուլտիվատորները՝ ծխախոտի շարքամիջյան հողեր  
մշակելու համար պետք է շղթաներով կցված լինեն, վորպես-  
զի հեշտությամբ հարմարվեն դաշտի դար ու փոսին, և ա-  
մերիկյան տրակտորաքարը կուլտիվատորների տիպ ունե-  
նան: Ձիաքարը և ձեռքի կուլտիվատորների կիրառման փոր-  
ձերն ասում են, վոր նրանք միանգամայն պետքական են  
աշխատանքի համար:

Մենք անհրաժեշտ ենք համարում բերել Համախոթե-  
նական Մխախոտագործական Ինստիտուտի փորձնական  
տնկարանների կարծիքները ձեռքի և ձիաքարը կուլտիվա-  
տորներ գործադրելու հարցի մասին: Որինակ, Մայկոպի  
տնկարանը, 1930 թվի փորձերի վրա հենված, ասում է, վոր



ձեռքի պլանետը բարձրացնում և աշխատանքի արտադրողականությունը, բայց չի կարող հորը փխրացնել հողը: Նամանավանդ, անհրաժեշտ և օրախոտի մշակույթն թեթեւ ավազախառն և փափուկ հողի վրա:

2 փխրացնող թաթիկները տափակ կտրող թաթիկներով հետևի կտրող թաթիկները տափակ թրթուրած և թաթիկներով փոխարինելով, ձիաքարը պլանետը տվեց շատ լավ արչյունքներ:

Փխրացումը կատարվեց 6—9 սմ. խորությունը, միաժամանակ լավ կարելով մոխրատերը:

Այսպիսի կուլտիվատորը 10 ժամում, 2 մարդով և մի ձիով մշակեց մինչև 2 հեկտար:

Յեթի սրա վրա ավելացվի ևս 19 մարդ, վորոնք պետք են շարքերը քաղհանելու համար, ապա մեզ մոտ 1 հեկտարին պահանջվում և 6 մարդ:

Ձեռքի գործիքներով քաղհանելու դեպքում, նորմալ պայմաններում 1 հեկտարին ծախսվում և 20—25 մարդ-օր:

Համաժողովեցնական Մխախտողործական Ինստիտուտի Գարյաչի-Կլյուչի տնկարանի փորձը ցույց և տալիս, վոր ձիաքարը սովորական պլանետները լիակատար հաջողությունը կարող են ոգտագործվել, նրա կառուցվածքում հետևյալ փոփոխությունները կատարելու դեպքում:

Հետևի թաթիկ իր յետևի մասում պետք և ունենա 38 սմ. լայնություն (տես 33 հղի նկար):

Անիվը քաղող կեռի մոտ հանվում և, այսինքն այս դեպքում մի դանակով կուլտիվատորն ավելի կայուն և դառնում և ավելի ուղիղ և դնում:


Փխրեցնող մասերը և խոփի թևերը պետք և հանվին:

Այսպիսի շարքահերկիչի արտադրողականությունը մի օրում հավասար և 1,5 հեկտարի:

Բարված տվյալները պարզ կերպով ասում են, վոր բոլոր տեսակի կուլտիվատորները լիովին հնարավոր և գործածել, ծխախոտի շարքերը հերկելու համար:

Մխախտողործական կոլտնտեսությունների 1932 թվի

խնդիրը կայանում և նրանում, վոր նրանք պետք և ոգտագործեն իրենց ունեցած բոլոր կուլտիվատորները, ծխախոտաշարքերը մշակելու համար:



Նկ. 1

Սա հնարավորություն և տալիս կրկնակի պակասեցնելու ծխախոտի քաղհանի համար ծախսվող բանուժը, ժամանակին կատարելու միջշարքային մշակումը և չկրկնելու անցյալ տարվա աջ սխալները, յերբ չքաղհանելուց վուչնչացավ 8 հազար հեկտար ծխախոտ:

100 տոկոսով ոգտագործենք յեղած կուլտիվատորները: Վճի մի հեկտար ծխախոտատունկ առանց քաղհանի չպետք և մնա:

### ԱՐԽԱՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒՄԸ ՅԵՎ ՈՒԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԲԱՂՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՄԻՍԱՆՈՏԸ ԴԱՇՏՈՒՄ ԽՆԱՄԵԼՈՒ ԴԵԴՔՈՒՄ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մխախոտի դաշտային խնամքն սկսվում և ծխախոտը տնկելուց և շթիլուց անմիջապես հետո: Այս ժամանակաշրջանում ինչպիսի հերթական խնդիրներ են դրվում ծխախոտագործական կոլտնտեսությունների, Ֆերմերի և հիմնականում ծխախոտագործական բրիգադների առաջ: Դիտվոր

և առաջնակարգ խնդիրն և թույլ չտալ վոչ մի դեպքում, վար մուլխոտերը խեղդեն ծխախոտի դաշտերը, չկրկնել անցյալ տարվա սխալները, յերբ խորհանսեսուլթյուններն ու կուտնտեսուլթյունները պլանը կատարելու հետևից վաղելով, բոլորովին արհամարհեցին քաղհանի ժամկետերը, թույլ տվեցին, վոր մուլխոտերն աճեն վաղ տունկերի վրա մինչև այն աստիճան, վոր դժվարացրին քաղհանի աշխատանքը։ Այսպես որինակ, այնտեղ, ուր պետք էր և հնարավոր էր թեթևացնել աշխատանքը կուլտիվատորներով և կարճ ժամանակում կատարել այդ աշխատանքը, մուլխոտերի ըուռն աճման պատճառով՝ կուլտիվատորների աշխատանքն անհնար դարձավ. այնտեղ, ուր պահանջվում էր 1 հեկտարի համար 10 մարդ-որ, պետք յեղավ ծախսել 25—23 մարդ-որ, և վերջապես այնտեղ, ուր հնարավոր էր 1 հեկտարից 1 տոնն և ավելի ծխախոտ ստանալ, ժամանակին չքաղհանելու, իսկ տեղ-տեղ բոլորորովին չըքաղհանելու պատճառով՝ բերքի կորուստը մեծ չափերի հասավ և փաստորեն մի հեկտարից ստացվեց 5-6 ցենտներ, միաժամանակ իջեցնելով արտադրանքի վորակը 20—30 տոկոսով։ Մեր ասածը հաստատող որինակներ շատ կան, բերենք միայն ամենաբնորոշներից մեկը—Սոչու ծխախոտական ռայոնից, վորի մի շարք կուտնտեսուլթյուններում ծխախոտադաշտերի փչացումը մեծ չափերի հասավ. քաղհանը ժամանակին չկատարելու և տեղ-տեղ բոլորովին չքաղհանելու պատճառով։

Համեմատելով 35-րդ եջի յերկու աղյուսակները, կարելի յե գալ հետևվյալ յեզրակացուլթյան։ Միևնույն գյուղխորհրդի կուտնտեսուլթյունները հողային և կլիմայական միյեղնույն պայմաններում, վոմանք (1-ին աղյուսակի կուտնտեսուլթյունների առաջին խումբը) քաղհանի կամպանիան թեքաղհանահատելու պատճառով, կորցրին ընդհանուր բերքի մինչև 80 տոկոս, իսկ մյուսները, ընդհակառակն (2-րդ աղյուսակի կուտնտեսուլթյունների 2-րդ խումբը), ժամանանակին ձեռնարկեցին քաղհանին, խնամքով կատարեցին

Աղյուսակ № 1

Կուտնտեսուլթյունների անունները	Առանձին անկուլմը հեկտարով	Ինչից փչացան				Բերքանվաքի ժամանակ մնաց	1-ին քաղհանի սկիզբը	Հավաքելու սկիզբը	Ծանոթություն
		Չքաղհանելուց հեկտ.	Հիվանդությունից	Տարկային աղակից	Ընդամենը				
Կոչի գ.-խ. 1) «12-րդ տարեդարձ»	202	30	105	8	143	5 9	22 VI	10 VIII	
2) «Կարմիր Հոկտեմ.»	48,95	15	26	1	42		24 VI	5 VII II	
Նավագիճկայի գ.-խ. «Կարմիր սերմաբույս»	36	75	10	8	23,5	1 3 56,95	6 VI	11 VIII	
Միլովկայի գ.-խ. 1) «Ինչի Սոցիալիզմ»	113	20	10	—	30	83	28 VI	27 VIII	
Մյասնիկյան գ.-խ. 1)	27,75	5,25	—	—	5,25	22	10 VII	15 VIII	2-րդ քաղհ.
2) «Նոր կյանք»	2,20	7,20	—	—	2,2	20	5 VI	2 VIII	չիկատ.

Աղյուսակ №2

Կուտնտեսուլթյունների անունները	Տնկման տարածուլթյունը հեկտ.	Ինչից վոչնչացավ				Բերքանվաքի մնաց ծխախոտ	Առաջին քաղհանի սկիզբը	Բերքանվաքի սկիզբը	Ծանոթություն
		Չքաղհանելուց հեկտ.	Հիվանդությունից	Տարկային աղակից	Ընդամենը հեկտ.				
Կոչի գ.-խ. 1) «Ստալին»	34,75	—	—	14	14	20,75	20 V	15 VII	կատ. 2 քաղ
2) «Վորոշիլով»	34,0	—	04	3,6	4	30	10 VI	23 VII	—
Նավագիճկ. գ.-խ. 1) «Միկոյան»	116,25	1	10	5,25	16,25	100	2 VI	7 VIII	կատ. 2 քաղհ. 100%
Միլովկայի գ.-խ. 1) Մերձծովյան	71	—	3,9	—	3,9	67,10	1 VI	10 VIII	կատ. 2 քաղհ.
Մյասնիկյան գ.-խ. 1) «Փարոս»	8,83	—	—	1,4	1,4	7,43	2 8 VI	12 VIII	—

1-ին և 2-րդ քաղհանները, վորի շնորհիվ բոլորովին հա-  
կառակ արդյունք ունեցան—համարյա կորուստ չունեցան,  
ծխախոտերը կանոնավորապես զարգացան (վորպիտին կա-  
րելի յե դատել ծխախոտաքաղ սկսելուց, վորը 2-րդ կմբի  
կոլտնտեսությունների մոտ շուտ սկսվեց) և տվեցին ավելի  
առատ բերք և լավ վորակի ծխախոտ: Անցյալ տարվա այս  
սխալները հիմնականում բացատրվում են աշխատանքի  
թույլ կազմակերպումով և վատ հաշվառքով կոլտնտեսա-  
յին արտադրության մեջ: Նյութական շահագործվածութ-  
յան բացակայությունը, լրակատար դիմադրությունը,  
անպլանայնությունը և ինքնահոսը ծխախոտական կոլտն-  
տեսությունների մեծ մասի մեջ անցյալներում այս հետե-  
վանքներին հասցրին:

Առաջիկա ծխախոտատնկման կամպանիայի և նրան  
հետեվող քաղհանի և բերքահավաքի կամպանիային մեր  
յերկրամասի կոլտնտեսությունները և խորհրտնտեսություն-  
ները, ղեկավարվելով ՀԿԿ(Բ) Կենտկոմի փետրվարի 4-ի  
Կոլտնտեկենարոնի փետրվարի 11-ի, Յերկրկոմի հունվարի  
21-ի, Յերկրկոլտնտնության մի շարք այլ վորոշումներով  
—պետք է հենց արտադրության սկզբից արմատապես վե-  
րակառուցեն իրենց աշխատանքները, այսինքն—1) Ճիշտ  
վորոշեն ծխախոտագործական բրիգադների մեծությունը՝  
արտադրական սկզբունքներով: 2) Ամբողջացնեն բրիգադ-  
ները կոլտնտեսականների մշտական և վորոշ կազմով, ան-  
հրաժեշտ քաշող ուժով և ինվենտարով: 3) Վերացնեն դի-  
մազրկությունը և հավասարեցումը՝ ամրացնելով կոլտնտե-  
սականներին քաշող ուժին, ինվենտարին և վորոշ հողամա-  
սին, սահմանելով կատարած աշխատանքի համար պատաս-  
խանատվություն, խրախուսելով կոլտնտեսականներին վո-  
րակական լավ ցուցանիշների համար և, ընդհակառակն,  
իջևցնելով այն կոլտնտեսականների աշխորների թիվը, վո-  
րոնք վատ են աշխատել: 4) Պայքարեն աղբոսեխնիկայի  
համար, մոցնելով այն՝ ծխախոտի արտադրության մեջ,  
սկսած տնկման հիմնական պրոցեսից մինչև ծխախոտի

հանձնումը: 5) Ամբողջովին անցնեն գործավարձին—ճիշտ  
կիրառելով գործավարձի առանձին ձևերը կոլտնտեսային  
արտադրության մեջ: 6) Ծավալեն սոցմրցումն ու հարվա-  
ծայնությունը բրիգադում, կամբում, կոլտնտեսականների  
միջև: Սոցմրցման լողունը պիտի լինի՝ տնկման և քաղհա-  
նի աշխատանքում հայտարարել լավագույն ցուցանիշներ,  
ծխախոտաքաղի և վերամշակման ժամանակ ստանալ լավո-  
րակ և կրկնակի բերք: Յեվ, վերջապես—7) Կոլտնտեսա-  
յին արտադրության հիմնաքարը դարձնեն կոլտնտեսակա-  
նների աշխատանքի ճիշտ հաշվառքը:

ՄԱՇՄ Հողժողկոմ ընկ. Յակովլևը խորհուրդների 6-րդ  
համագումարում ասաց. «Յեթե մենք ուզում ենք ամուր  
կոլտնտեսություններ ունենալ, յեթե մենք ուզում ենք,  
վոր կոլտնտեսությունները որեցոր զարգանան, ապա  
առանց հաշվառքի մենք դրան չենք հասնի, վորովհե-  
տեվ, առանց հաշվառքի կոլտնտեսությունները ավելի քիչ  
արդյունավետ են լինում, քան նրանք կարող են լինել:  
Առանց հաշվառքի կոլտնտեսականը չի ձգտագործում վե-  
րելքի այն բոլոր հնարավորությունները, վոր տալիս է  
համայնացված տնտեսությունը: Առանց հաշվառքի մարդիկ  
շփոթվում են բարդ, խոշոր տնտեսության մեջ»:

Թվիլով աշխատանքը մարտական տեմպերով վերակա-  
ռուցելու այս բոլոր հիմնական դրությունները՝ ընդհան-  
րապես կոլտնտեսություններում և մասնավորապես բրի-  
գադներում, այժմ անցնենք գործնական ցուցմունքներին,  
թե ծխախոտագործական բրիգադներն ինչպես պիտի դա-  
սավորեն իրենց ուժերը դաշտում ծխախոտի քաղհանի և  
ընդհանրապես դաշտային խնամքի համար:

#### ՈՒԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԾԽԱԽՈՏԻ ՔԱՂՀԱՆԻ ՀԱՄԱՐ

Սովորաբար քաղհանի սկիզբը զուգադիպում է ծխախո-  
տատնկման պրոցեսին:

Ծխախոտատնկումից յերկու շաբաթ անց, տնկման և  
քաղհանման Վրաժամանակ կատարվող աշխատանքներն ի-

րար են խառնվում, և ծխախոտագործական բրիգադը կոլտնտեսականների մի մասին պետք է ձգի վաղատունկ դաշտերի քաղհանի ճակատը: Տնկումն և շթլումը վերջնակա-նապես ավարտելուց հետո, բրիգադն ամբողջովին անցնում է քաղհանին: Առաջին քաղհանն ավարտելով, բրիգադը յերկու շաբաթից հետո կամ ավելի շուտ, անցնում է յերկրորդ քաղհանին, իսկ տեղ-տեղ՝ յերրորդին:


Այսպիսով ծխախոտաբրիգադի ազրո-պլան կարգազրի մեջ, վոր կազմված է ծխախոտատնկման ամբողջ ժամանակաշրջանի համար, մտցվում են նաև քաղհանի աշխատանքները, կամ ամբողջովին՝ տնկումն սկսելուց առաջ կամ, յեթե աշխատանքների մի մասը չի մտցված ազրո-պլան կարգագրում, ապա տնկումն ավարտելուց մի շաբաթ առաջ, լրացուցիչ կերպով կազմվում է ազրո-պլան կարգա-զրի, վորը նախատեսում է ծխախոտը խնամելու աշխատանքները (քաղհան) մինչև բերքահավաքի սկսելը, այնպես վոր քաղհանի և բերքահավաքի միջև խիստ սահման դնելը գործնականորեն նույնպես չի կարելի, վորովհետև քաղհանի վերջը զուգադիպում է բերքահավաքի սկզբին. այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում խիստ չսահմանա-փակվել քաղհանի համար անկախ ժամանակաշրջանի, այլ մտցնել նրանց տնկման (քաղհանի սկիզբը) և բերքա-հավաքման (քաղհանի վերջը) կամպանիայի ազրո-պլան կարգազրում: Ծխախոտատնկման համար կոլտնտեսական-ներին դասավորելիս մենք նշեցինք բրիգադը 7—8 մարդուց բաղկացած խմբերի բաժանելու նպատակահարմարու-թյունը: Այս խմբերը ծխախոտատնկումը կատարում են այն հողամասում, վորին ամբացված է ծխախոտագործա-կան բրիգադը: Յերկու շաբաթից հետո, իսկ տեղ-տեղ նույն-պես ավելի շուտ, բրիգադից պետք է կոլտնտեսականների մի մասն (խումբն ամբողջութամբ) ամբացնի այն դաշտե-րի առանձին քաղհանին, ուր արդեն ծխախոտը տնկված է: Այս գործում ուշանալը կարող է լուրջ հետեվանքներ ա-

ռաջ բերել, վորովհետև մեր ծխախոտագաշտերի մոլախո-տերը, մանավանդ անձրեկային յեղանակներին, կասեցնում են ծխախոտի աճումը և խեղդում նրան: Ծխախոտը փրկե-լու և դրան նորմալ զարգացում տալու համար պետք է վոնչացնել մոլախոտերը: Վորպեսզի հնարավոր լինի սահ-մանել, թե քանի կոլտնտեսականի պետք է նետել քաղհա-նի ճակատը և ընդհանրապես ինչպես դասավորել ուժերը քաղհանի աշխատանքների համար, քննենք քաղհանի ձե-վերը, նպատակահարմար զետեղումը և մարդկանց պահանջ-վող քանակը 1 հեկտարի համար, աշխատանքի պրոցեսի մեքենայացման համապատասխան: Նայած տեղի հարթութ-յան կարելի չի գործի դնել՝ 1) ձիաքարը կամ տրակտորա-յին կուլտիվատորներ, ձեռքի թորխերով շարքամիջյան տարածությունները մշակելուց հետո, 2) համատարած մշա-կումը ձեռքի թորխերով (լեռնոտ տեղեր, ինչպես նաև այնպիսի դաշտեր, վորոնք կլանված են մոլախոտերով մինչև այն աստիճան, վոր կուլտիվատորները չեն կարող աշ-խատել):

Կուբանի և Մաչկոպի ուսյունների մեծ մասում բոլոր տեսակի ծխախոտների համար սահմանված շարքամիջյան տարածությունները (60 սմ. × 12 փոքր տեղերի համար և 60 սմ. × 15 մեծ տեղերի համար) հնարավորություն են տալիս վոնչ միայն ձիաքարը կուլտիվատորներով (պլանետ № 8, շարքահերկիչ «Կրյումեր» ե այլն) մշակելու միջ շար-քային հողերը, այլ նաև տրակտորաքարը կուլտիվատոր-ներով կամ շարքահերկիչներով: Իրա համար ել հիմնակա-նում այս ուսյուններում 100 տոկոսով ծխախոտատնկումը կարելի չի կուլտիվացման յենթարկել, դրանով հենց վերջ-նականապես լուծելով ծխախոտային միջշարքային մշա-կումը մեքենայացնելու համար:

Անցնենք այժմ կոլտնտեսականներին հողամասի վրա դասավորելու հարցին, քաղհանն անցկացնելու ժամանակ: Նախ քննենք ձեռքի սովորական բրիչով կատարվող համա-տարած ձեռամշակման պայմանները:

Քաղհանելու և թորխելու լավագույն ձևը պետք է համարել հետեվյալը (տես գծագիրը). կոլտնտեսականները մեկը-մյուսի հետեվից կարգով գրավում են շարքամիջյան տարածությունները և քայլ առ քայլ առաջ շարժվելով առանց դուր տեղ կոխկռտելու հողը, բրիչով փորում և հանում են մոլախոտերը և ըստ հնարավորին առանց հողի նըրանց ջրում են առաջ՝ վոտքերի տակ, շարքերի մեջ տեղ մաքրված տեղը 6—7 սանտիմետրի վրա կարգով փխրացնում են. նույնն է անում նաև բույսերի միջև յեղած շարքում, դիզելով տերեփների շուրջը փուխը հող (բուկը լցնելը), վերջինս կատարվում է յերկրորդ քաղհանի ժամանակ. առաջին քաղհանին սահմանափակվում են սոսկ բույսերի




Նկ. 2

շուրջը յեղած հողը փխրացնելով: Վերջացնելով իր շարքը, կոլտնտեսականը կանցնի հետեվյալին և կսկսի աշխատանքը հակառակ ուղղությամբ: Այսպիսով բրիչադիրն խմբերին քաղհանի վրա դասավորելիս, արտադրանքի նորմայից յիջնելով՝ պետք է յուրաքանչյուր խմբին ամբողջի շարքերի այնպիսի քանակ, վոր միանգամայն նրանք կսրողանան ամբողջ որն աշխատել և վոչ մի դեպքում թույլ չտալ այնպիսի յերեվույթի, յերբ որվա մեջտեղ իր դուր տեղ զբաղվեն խմբերին կամ առանձին կոլտնտեսականներին հողամասում դասավորելու աշխատանքով:

Գործնականում շատ կոլտնտեսություններ, մանավանդ նոր ծխախոտամշակման ույոններում, ուրիշ ձևեր են կի-

րառում, վորոնք կամ կապված են ավելորդ անցուղարձեքի հետ, սրանով հենց դուր ժամանակ վատնելով, կամ այս ձևերն աշխատանքի պրոցեսում առաջ են բերում բույսերի (ծխախոտի) թուլումը: Այսպես որինակ, քաղհանի ժամանակ (առաջին) քաղհանողները վոչ թե շարքերի յերկարությամբ են շարժվում, այլ լայնությամբ (տես 2-րդ սքեման): Այս դեպքում նախ՝ առաջ է գալիս աշխատանքի դիմադրկություն, վորովհետև չի կարելի վորոշել թե ո՞վ տարածության վոր մասն է քաղհանել և յերկրորդ՝ շար-

Տախտակի լայնությունը 40 մետր Միջշարքային 60 սանտ.



Նկ. 3

քերում հաճախ բույսը կոխկռտվում է և վոչնչանում: Քաղհանի այսպիսի ձևվին վերջ պետք է արվի: Հաճախ կոլտնտեսականները դասավորվում են շարքերի յերկու կողմերից միջշարքայինների յերկարությամբ, քաղհանողները (թորխողները) առաջ են շարժվում մեկը մյուսի դիմաց: Այս ձևը նույնպես անպետք է, քանի վոր այնտեղ ևս դիմադրկություն է և բացի այդ՝ նա կապված է ավելորդ անցուղարձի հետ (տես 3-րդ սքեման):

ՇԱՐՔԱՄԻՋՅԱՆ ԶԻՈՎ ՄՇԱԿՈՒՄԸ

Շարքամիջյան տարածությունները ձիով կամ արակտորով մշակելիս, փոքր շարքերը ձեռքով քաղհանելու և դարսելու հետ միասին, յերկու ձև գոյություն ունի: Առաջին ձևն այն է, վոր բաց են թողնում կուլտիվատորներ,

ապա ձեռքով քաղհանում են և բաց թողած տեղերը և կոխկռտված բույսերը դրստոււմ: Յերկրորդ ձևն, ընդհակառակն, առաջ կոխմտեսականներն են քաղհանում փոքր շարքերը, ապա կուլտիվատորներ բաց թողնում: Թե մեկը և թե մյուս ձևն ունի և դրական, և բացասական կողմերը: Առաջին ձևի թերությունը կայանում է նրանում, վոր կուլտիվատորները աշխատելիս՝ ծխախոտերը թափում են շարքերում և յերբ նրանցից հետո դալիս են քաղհանողները, նրանք բաց են թողնում կամ բրիչով մոլախոտերի հետ միասին հողից դուրս քաշում առանձին ծխախոտաբույսեր: Յերկրորդն այն է, վոր շարքամիջյան փխրացված սարածուկները քաղհանողների կողմից կոխկռտվում են: Յերկրորդ ձևի թերությունն այն է, վոր կուլտիվատորի մեջ շարքայինների հետագա մշակումով (այսինքն նրանցից հետո, յերբ քաղհանողները վերջացրել են շարքամշակումը) կարող են շարքերում ծխախոտը քանդել, վորը հետագայում չի կարող ուղղվել, վորովհետեմ դրս համար պետք է լինում քաղհանողներին յերկրորդ անգամ անցնել մի անգամ արդեն անցած շարքերը: Սակայն մենք նպատակահարմար ենք գտնում յերկրորդ ձևի կիրառումը, այսինքն առաջ շարքերը քաղհանել, հետո բաց թողնել կուլտիվատորներ, քանի վոր պարզ և հասարակ հարմարեցումով (կուլտիվատորների կողքերին կպցնում են փոքր տախտակներ) կարելի չէ ծխախոտը փրկել հողակոշտերի տակ մնալուց, իսկ կուլտիվատորի աշխատանքից հետո կոլտեսականները խնամքով պետք է փշրեն շարքամիջյանների քաղհանից մնացած հողակոշտերը:

Քննելով քաղհանի ժամանակ գործադրվող յեղանակները, շարքամիջյան քաղհանի մեքենայացման հարցերը,—այժմ անցնենք այն խնդիրներին, թե՝

Ինչ մեծության պիտի լինեն խմբակները:

Ինչպե՞ս դասավորել խմբակները հողամասերում:

Առաջին հերթին կանոց առնենք ձեռքի համատարած քաղհանի վրա:

Արտադրույթի նորման կախված է տեղի դիրքից և գլխախալորապես նրանից, թե ինչ քանակությամբ մոլախոտեր կան: Միջակ պայմանների դեպքում, քաղհանը ձեռքով կատարելիս, 15 կոլտեսականների որական արտադրույթը սահմանված է 1 հեկտար\*):

Յեղնելով այդ նորմայից, ծխախոտագործական բրիգադը,—վորը մենք առաջարկում ենք կազմակերպել 30—40 կոլտեսականներից,—կարելի չէ բաժանել 2—3 խմբակների, այն հաշվով, վոր յուրաքանչյուր խմբակի արվի որական  $\frac{2}{3}$  հեկտար մշակելու առաջադրություն: Ծխախոտի տնկման և քաղհանի ժամանակաշրջանում բրիգադի մեջ մտնող կոլտեսականների հիմնական մասը պետք է աշխատի ծխախոտատունկի վրա, իսկ քաղհանի համար, ծխախոտատունկի սկզբից 10—15 որ անցնելուց հետո, ջոկվում է մի խմբակ՝ բաղկացած 10 կոլտեսականներից: Ծխախոտատունկի վերջում ամբողջ ծխախոտագործական բրիգադն անցնում է քաղհանին:

Քաղհանի ընթացքում միանգամայն հնարավոր է գործադրել անհատական և մանավանդ մանր-խմբակային գործավարձը: Յեղակետ ունենալով գործավարձի այդ յերկու ձևերը և ուշադրության առնելով քաղհանի յեղանակներն ու ձևերը, վորոնց մասին մենք խոսեցինք, կարելի չէ հետևյալ ձևով դասավորել կոլտեսականներին և ամբողջ խմբակը.—

Անհատական գործավարձի դեպքում, յուրաքանչյուր կոլտեսականի արվում են,—յեղնելով արտադրույթի որական նորմայից,—վորոշ քանակությամբ շարքեր և շարքամիջեր, վորոնք նա պարտավոր է մշակել (տես 4-րդ սխեման): Ուշեքի այսպիսի դասավորության դեպքում բրիգադի բնեղն

\*) Արտադրույթի նորմաների և աշխատանքների գործավարձային, աշխորերով գնահատման տեղեկատու Հյուսիսային Կովկասի կոլտեսակությունների համար, հրատարակություն Յերկրկոլտնամության և սոցիալիստական յերկրագործության եկոնոմիկայի դիտական-հետազոտական Ինստիտուտի, պրակ 2-րդ:

ու խմբավարներն առանձնապես լավ պետք է ծանոթանան ամեն մեկի կատարած աշխատանքի պայմաններին և ըստ աշխատանքի դժվարութեան, տան այս կամ այն զնահատականն այնպես, վոր չլինեն դժգոհութեաններ:

Անցյալ տարի Ախտարակայա գյուղում, շնորհիվ աշխատանքների այդպիսի դասավորութեան, աշխատանքը ճշտագահութեամբ եր կատարվում և լավ եր հաշվի առնվում, վորովհետև յուրաքանչյուր կոլտնտեսական մեծապես շահագրգռված եր գրանուծ և ջանասիրութեամբ մշակում եր իրեն տրված հողամասը: Միակ մոմենտը, յերբ կոլտնտեսականները դեմ յնդան այդպիսի դասավորութեան, դա այն եր, վոր մինակ աշխատելը ձանձրալի յի: Սմբակային աշխատանքի դեպքում, յերբ մի քանի կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ հետևողականորեն գրավում են շարքիկները և առաջ են շարքվում մի ուղղութեամբ, հոգնեցուցիչ չի լինում և ժամանակն ել աննկատելի յե անցնում: Այս դեպքում մրցումն ել կարծես ինքն իրեն և առաջ գայիս, վորովհետև վոչ վոք չի ուղում հետ մնալ: Յեթե այս կամ այն կոլտնտեսականը կամ կոլտնտեսուհին դանդաղ աշխատեն, նրանց թերակատարածն ել կատարվում է ընդմիջումի ժամանակ: Ահա թե ինչու, հաշվի առնելով այս և ուրիշ մի շարք նկատառումներ (դժվար է պատկերացնել, վոր կոլտնտեսականների մշակած հողաշարքերը միատեսակ լինեն մոլախոտերի քանակութեան, հողի պնդութեան և այլ տեսակետից), կարելի յե առաջարկել, վոր մանր-խմբակային գործավարձը կիրառվի քաղհանի ժամանակ: Այսպիսի գործավարձը լավ արդյունքներ կտա մանավանդ այն դեպքում, յեթե ընտրեն այնպիսի քաղհանավոր կանանց կամ տղամարդկանց, վորոնք համերաշխութեամբ են աշխատում իրար հետ:

Այս դեպքում որական ստաջադրութեան է տրվում, որինակ, 3-5 կոլտնտեսականներից բաղկացած խմբակին, վորոնք հետևաբար գրավում են շարքերն ու շարքամիջերը և ամբողջ աշխատանքը միասին են կատարում: Ստացված աշխատանքային որերը նրանք հավասար բաժանում են իրենց մեջ:

Այսպիսի խմբակի դասավորութեանը ցույց է տրված № 5 սքեմայում (տես 75-րդ էջ): Շարքամիջերը ձիու քաղհանիչներով, կամ բույսերի միջև քլունգներով մշակելիս, կոլտնտեսականների քանակի հաշվառումը մի քիչ ուրիշ տեսակ կլինի: Ձիու կուլտիվատորի որական արտադրույթը, յերբ շարքամիջերի լայնութեանը 60 սմ. է, — հավասար է 2 հեկտարի: Միևնույն ժամանակ 2 հեկտար շարքեր ունեցող ծխախոտատարածութեանը ձեռքով քաղհանելու համար, հարկավոր կլինի 16 կոլտնտեսական: Ընդամենը կլինեն 18 աշխատողներ, հաշված նաև կուլտիվատորին սպասարկողներին: Հետևաբար, յեթե ամբողջ ծխախոտագործական բրիգադն անցել է քաղհանի, նա կարող է բաժանվել քաղհանավորների 4 խմբակի, սրանցից ամեն մեկում 8 մարդ: Քաղհանավորների յուրաքանչյուր յերկու խմբակին հարկավոր է 1 կուլտիվատոր, սրան սպարարկող 2 կոլտնտեսականներով:

Ուժերի դասավորութեանը մոտավորապես նույնն է, ինչ վոր ձեռքով քաղհանելու ժամանակ: Աշխատանքի կարգը, ինչպես մենք մատնանշեցինք, այսպես է. — սկզբում քաղհանավորներն սկսում են քաղհանը, ապա նրանց հետքով գնում է կուլտիվատորը: Գործավարձի ձևը կամ անհատականն է, կամ առավելապես մանր-խմբակայինը:

Յեթե տեղ-տեղ բանեցվում է տրակտորային կուլտիվատոր, ապա քառաշարք կուլտիվատորի որական արտադրույթը կարող է ընդունվել 8 հեկտար: Այսպիսով այդքան տարածութեամբ քաղհան անելու համար հարկավոր կլինի մինչև 64 կոլտնտեսական. ուրիշ խոսքով, այնտեղ, վորտեղ կուլտիվատորներն աշխատում են տրակտորի ուժով, բրիգադների կազմը կարող է լինել 60 մարդ, կամ յեթե յերկու բրիգադների հողամասերն իրար կից են, կարելի յե նրանց ամբողջել տրակտորին՝ վերջինս բանեցնելու համար: Այս խմբակների մեծութեանը նույնը կլինի և նույնպես կարելի յե ամեն մի 3—4 կոլտնտեսականի հանձնարարել վորոշ առաջադրութեան:

Այստեղ բերված մեր բոլոր տվյալները վերաբերում են

առաջին քաղհանին: Նայած թե վորքան իր ժամանակին և խնամքով և կատարվել առաջին քաղհանը, յերկրորդ քաղհանի աշխատանքները կթեթևանան և ավելի պակաս քանակությամբ կոլտնտեսականներ կաշխատեն:

Յերկրորդ քաղհանի ժամանակ, նայած թե աշխատանքի ինչ ձևեր են կիրառվում, խմբակների մեծութունն առաջին քաղհանի ժամանակ աշխատող խմբակներից կտարբերվի (կպակասի) 1—2 մարդով: Սակայն, կրկնում ենք, դա կախված է աշխատանքները ժամանակին կատարելուց: Իսկ յեթե առաջին քաղհանի աշխատանքները ժամանակին չկատարվեն և մոլախոտերը աճեն ծխախոտի դաշտերում, այդ դեպքում աշխատանքը բարդանում է, յուրաքանչյուր քաղհանվելիք հեկտարի համար ավելի շատ մարդիկ են պահանջվում:

Ինչպես ծխախոտի մշակման բոլոր բնագավառներում, այստեղ ևս աշխատանքի հաջողութունը կախված է աշխատանքի սոցիալիստական ձևերի լայն ծավալումից: Քաղհանի ժամանակաշրջանում, յերբ կոլտնտեսականներն աշխատում են շարքերում, բոլոր խմբակների, առանձին կոլտնտեսականների միջև պետք է սոցիալիստական մրցության պայմանգրքեր կնքվեն: Վոչ մի կոլտնտեսական, վոչ մի կոլտնտեսուհի չպիտի դուրս մնա սոցմրցումից և հարվածայնութունից: Նյութական շահագրգռվածութունը, վորակի ու քանակի լավագույն ցուցիչները պետք է քաղհանի ժամանակ ամեն մի կոլտնտեսականի աշխատանքի հիմք դառնան: Միայն այն դեպքում, յերբ զիտակից վերաբերմունք կլինի դեպի աշխատանքը, յերբ կը կիրառվեն աշխատանքի լենինյան մեթոդները,—միայն այն դեպքում կարելի յե հաջողությամբ անցկացնել քաղհանի բոլոր աշխատանքները: Միայն այդպիսով կբարձրանա բերքատվութունը, կկրճատվեն կորստները, կազմակերպչորեն ու տնտեսապես կամրապնտվեն կոլտնտեսութունները և ավելի կբարելավվի կոլտնտեսականների դրութունը:

## ԳԱՂՀԱՆԻ ԺԱՍՆԱԿԱՇԵՐՋԱՆՈՒՄ ՄԻԱԽՈՏԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ծխախոտատունկի ժամանակաշրջանում ծխախոտի ֆլուսատունների ու հիվանդութունների դեմ պայքարելու հարցերը մենք արդեն պարզեցինք շատ թե քիչ հիմնավորված:

Մենք ասացինք, թե ծխախոտի և թե բոլոր մյուս կուլտուրական բույսերի ֆլուսատունների և հիվանդութունների բույնը հանդիսանում են մոլախոտերը: Ահա թե ինչու քաղհանի ժամանակ մոլախոտերի մանրակրկիտ վոչնչացումը մեծ նշանակութուն ունի վոչ միայն իբրև ագրոտեխնիկական միջոցառում, վորը հնարավորութուն է տալիս ծխախոտի բույսերի նորմալ զարգացման, այլև մի յերաշխիք է հանդիսանում հետագայում ծխախոտի ֆլուսատունների և հիվանդութունների զարգացման դեմ, վորոնք հսկայական ֆլուսանք են հասցնում կոլտնտեսային բերքին:

Մոտավոր, վոչ լրիվ հաշվով, անցյալ տարի կոլտնտեսութունները, շնորհիվ քաղհանի վրչիր ժամանակին անցկացնելուն, տեղ-տեղ նույնիսկ բոլորովին չանցկացնելուն, յուրաքանչյուր հեկտարից առնվազն 5—6 ցենտներ ծխախոտ պակաս հավաքեցին: Բացի դրանից, հավաքված ծխախոտը քանակի ու վորակի տեսակետից ցածր էր: Այս բոլորը միասին վերցրած՝ թուլացնում էր ծխախոտագործական կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումը, իջեցնում էր աշխատանքային որվա արժեքը և վերջին հաշվով պակասեցնում էր բարեխիղճ աշխատող կոլտնտեսականի վաստակը:

Հաշվի առնելով անցյալի այս սխալները, անհրաժեշտ է այս տարի քաղհանի կամպանիան—այդ չափազանց պատասխանատու և կարևոր կամպանիան, անցկացնել մի առանձին խնամքով և առանց դանդաղելու: Այս աշխատանք



քի ընթացքում անիութեան թիւերը, դանդաղութիւնը կարող է լուրջ հետեանքներ ունենալ—ծխախոտը կարող է խիստ վնասակար մտախոտերից և նրա բերքը կարող է վտնանալ վնասատուներից և հիվանդութիւններից, վորոնք այդպիսով նպաստավոր պայմաններ կգտնեն իրենց զարգացման համար: Պարզ է, վոր այնպիսի մտախոտեր, ինչպիսին են թայլը, մորմը, պատատուկը և այլն, գրավում են ծխախոտի վնասատուների մեծ մասին և շատ դեպքերում հանդիսանում են ծխախոտի ամեն տեսակ սնկային հիվանդութիւնների աղբյուր:

Այստեղ մենք համառոտակի կանգ առնենք ծխախոտի գլխավոր վնասատուների ու հիվանդութիւնների վրա, վորոնց դեմ հարկավոր է կռիւ քաղհանի ընթացքում, անցկացնելով այս կամ այն ազդոտեխնիկական միջոցառումները:

Ծխախոտի վնասատուները դասոււմ: Ծխախոտի պլանտացիաներին ամենից շատ վնաս են հասցնում հետեյալ միջատները—աշնանային բվիկը, մարգային թիթեռը, տրիպլը, թլյան և մակաբույժ բույսերից՝ ճրագախոտը և այլն:

Առանցքային բվիկ: Ծխախոտի տերեւներին և նրա վաղ հասակում—աւորջ բույսին վնաս է հասցնում գլխավորապես աշնանային բվիկի թրթուրը: Թիթեռը ձվեր է դնում գլխավորապես մտախոտերի վրա—տատակի, պատատուկի, մորմի, թայլըյի և այլն: Մեկ կամ մեկ ու կես շաբաթից հետո միլիոններից դուրս են գալիս թրթուրները, վորոնք ըսկզբում սնվում են մտախոտերի տերեւներով, իսկ հետո անցնում են գլուղատանեական կուլտուրական բույսերին, մասնավորապես ծխախոտին:

Աշնանային բվիկի թրթուրը յերկու տեսակ վնաս է հասցնում ծխախոտին.—նա ուտում է մատաղ բույսի տերեւները և, վոր ավելի վտանգավոր է, կրծում է ցողունը վորից բույսը փչանում է: Յերբ բույսն ավելի մեծանում է, թրթուրն ուտում է նրա ցողունները, վորով խանդավորում է բույսի աճը և, վոր ավելի վտանգավոր է, նա յենթարկվում է սնկային հիվանդութեան:

Նույն կերպ են վնաս հասցնում նաև բվիկի մի այլ թիթեռ (իպսիլոն) թրթուրները: Այս թիթեռը ձվեր է դնում նաև ծխախոտի տերեւների վրա:

Մեկ տարվա ընթացքում աշնանացանի բվիկը տալիս է երկու սերունդ, իսկ իպսիլոնը տալիս է մինչև 4 սերունդ: Թիթեռն իր կյանքի ընթացքում դնում է մինչև 100 ձու: Բավական է մեկ—յերկու հարյուր թիթեռներ, թրթուրների զարգացման մի շարք նպաստավոր պայմաններ—և ահա ընդամենը մեկ—յերկու ժամում ծխախոտի պլանտացիան նրանք վտնանցնում են մեկ հեկտար ծխախոտի տունկ:

Գաղհանի ժամանակաշրջանում վերոհիշյալ վնասատուների դեմ պայքարելու հիմնական միջոցը՝ դա բոլոր մտախոտերի մանրակրկիտ վտնանցումն է, այն ել վոչ միայն ծխախոտի տարածութեան վրա, այլև միջնորմներում, ճանապարհների ափին և հարևան հողամասերում:

Մարգային թիթեռ: Մրա թրթուրը չի համարվել ծխախոտի հատուկ վնասատու, այլ համարվել է պատահական: Մակայն վերջին յերկու տարում նա կուրանում, շնորհիվ մեծ քանակութեամբ բաղմանալուն, մեծ վնաս է հասցնում ծխախոտի պլանտացիաներին: Ծխախոտին առանձնապես մեծ վնաս է հասցնում մարգային թիթեռի յերկրորդ սերունդը, վորը յերևան է գալիս հունիսի առաջին կեսին և վտանգավոր է մանավանդ իր շատակերութեամբ, իսկ այդ ժամանակ ծխախոտը դեռ մատաղ է, բոլոր մյուս գլուղատանեական բույսերից ամենահյութալին է և ամենաքնքուրը—իբրև առավել ուշ հասունացող մշակույթ,—ուստի և նա գրավում է թրթուրներին, վորոնք ուտում են նրա տերեւները:

Աշնանային բվիկի թրթուրների դեմ նախազգուշացման միջոցները հետեյալներն են.—նախ պետք է մանրակրկիտորեն վտնանցնել մտախոտերը ծխախոտի շաբաթերում ու շաբաթամիջերում, ինչպիսի և հարևան հողամասերում: Միայն ժամանակ լավ արգլունք կստացվի, յիթե ծխախոտի դաշտին կից հարևան մշակութիւնները և հողամասերը, վորոնք

բունված են մուխտոտերով, սրսկվեն թունավոր հեղուկով, վորի բաղկացուցիչ մասերը պիտի լինեն՝ 6 կգ. քլորալին բառի, 600 կգ. կարտոֆիլի մոս և 120 լիտր ջուր: Խորհուրդ չի տրվում ծխախոտն սրսկել այդպիսի հեղուկով, վորովհետև նա ծխախոտին վատ համ և տալիս և նուշնիսկ խանձում և ծխատոտի քնքույշ տերևները:

Հանձնարարվում է թրթուռների մասսայական արշավի դեպքում ծխախոտատունկի կողքին, թրթուռների ընթացքի առջև փորել խանդակներ 30 սմ. լայնությամբ և խորությամբ, ծխախոտի կողմից շինելով հատուկ պատ: Յնթե այս միջոցառումն իր ժամանակին կիրառվի, նա ծրխախոտը կաղաթի ֆլասատուններից:

Ուրիշ վնասատուներ: Ծխախոտին ֆլասո են հասցնում միջատների թվին պատկանող նաև մի ամբողջ շարք թիթևուներ, դանադան բզեզներ, ափիս միջատներ, լվեր և այլն: Մենք չենք կանգ առնի նրանց կյանքի, դարգացման յեզանակների և հասցրած ֆլասաների վրա: Նրանց մեծամասնությունը ծխախոտին անցնում և մոլախոտերից: Նրանք բազմանում են անխնամ թողնված, մոլախոտերով ծածկված հողամասերում ու միջնորմներում: Ահա թե ինչու այդ ֆլասատունների մեծամասնության դեմ ողտակար և այնպիսի ընդհանուր միջոցառումը, ինչպիսին և ծխախոտի պլանտացիաները մոլախոտերից մաքուր պահելը, իր ժամանակին առաջին և յերկրորդ, իսկ յեթե հարկավոր է, նաև յերրորդ բաղձանի կատարումը:

Ճրագախոտ: Մակաբույծ բույսը—ճրագախոտը (զարագիխան) ծխախոտի համար դաշտում ամենավտանգավոր թշնամիներից մեկն է: Ծխախոտի ճրագախոտը շատ նման է այն ճրագախոտին, վորը բուսնում և արևածաղկի արմատների վրա և նուշնպես ֆլասո և հասցնում ծխախոտին: Ծխախոտի ճրագախոտը՝ դա փոքրիկ բույս է 10—20 սանտիմետրի չափ, կապտավուն-կենամոնագույն ծաղիկներով: Տերևների փոխարեն, ինչպես և մյուս մակաբույծ բույսերը, ցողունի վրա ունի փոքր փշեր: Գանվելով բույսի արմատ-

ների մոտ, ճրագախոտը անվում է նրա հյութերով, ուժեղ չափով զարգանում և և շուտով առաջացնում է բազմաթիվ մանր սերմեր: Ճրագախոտի սերմերը շատ մանր են, հեշտությամբ են տարածվում քամու միջոցով: Այս պատճառով, հենց վոր մի վորեւ հողամասում յերևա ճրագախոտը, կարճ ժամանակից հետո բոլոր շրջակա պլանտացիաները նուշնպես ամբողջովին կվարակվեն:

Ճրագախոտով վարակված ծխախոտը սկզբում լինում է թույլ, տերևները կախվում են, ամբողջ բույսը քայքայվում է ու մաշվում և մեծ մասամբ, յեթե բոլորովին չի վոչընչանում, տալիս է վատ վորակի ցածր բերք:

Այն տեղերում, վորտեղ հայտնաբերվում է ճրագախոտը, պետք է իսկույն և յեթ լուրջ միջոցներ ձեռք առնել նրան վոչնչացնելու համար և թույլ չտալ, վոր նա տարածվի: Այդ միջոցները հետևյալներն են.—մանրակրկիտ կերպով նայվում և ամբողջ դաշտը, աչքից բաց չթողնելով և վոչ մի ճրագախոտ: Յեղած ճրագախոտերն արմատահանվում են, դաշտից դուրս են տարվում և վառվում: Այս աշխատանքը պիտի կատարել մի առանձին խնամքով, վորովհետև բավական է դաշտում թողնել ճրագախոտի մի քանի թփիկներ և նուշնիսկ ցողուններ—և նրանք հետագայում սերմեր կտան, ճրագախոտը նորից կտարածվի և կֆլասի բերքին:

Ճրագախոտը շարունակում է յերևալ նաև ծխախոտի հավաքից հետո: Ուստի, վորպեսզի ավելի ապահով լինել նրա տարածվելուց, ծխախոտի տերևները հավաքելուց հետո, խոր հուրդ է արվում պոկել ծխախոտի ցողունը և վառել: Այն հողամասերում, վորոնք անխնամ են թողնվել և ճրագախոտը տարեց-տարի ուժեղացել է, այլևս ծխախոտ չպետք է սնկել: Այդտեղ պետք է ցանել ուրիշ գյուղատնտեսական կուլտուրաներ. գլխավորապես հակավոր—վարսակ և ցորեն Միայն 5-6 տարուց հետո պիտի անցնել ծխախոտի սնկման:

Մենք կանգ առանք ծխախոտի վերահիշյալ ֆլասատուների վրա, վորոնք մասամբ պատկանում են միջատների,

մասամբ ել մակարույծ բույսերի թվին: Այժմ անցնենք ծր-  
խախտտի մի քանի, առավել ֆլասակար հիվանդություններին,  
վորոնք պատահում են ծխախտազործական ուսյուններում:

Ծխախոտի հիվանդությունները: Գիտությունն ասացու-  
ցել է, վոր ծխախոտի դաշտերում յերևացող հիվանդու-  
թյունների մեծ մասը սկիզբ է առնում սածիլանոցներում:  
Ծխախոտի սածիլի հետ միասին վարակն անցնում է դաշտ,  
ուստի նախազգուշացման միջոցներն ամենից առաջ պետք  
է ձեռք առնվին հենց սածիլանոցների վերաբերմամբ, իսկ  
հետո—ծխախոտատուների ժամանակ, պիտի ձեռք առնվին  
պրոֆիլակտիկ միջոցներ:

Ամենաֆլասակար հիվանդությունները, վորոնք շատ վա-  
րակիչ են և պատահում են ծխախոտի պլանտացիաներում,  
հետևյալներն են. արմատափտում, ալբացող, մանտար, չե-  
չացավ և մոզայիկ հիվանդություն: Նկարագրենք նրանցից  
մի քանիսը.—

Արմատափտում: Այս հիվանդությունն առաջ է բերում մի  
սնկիկ, վորը գիտականապես կոչվում է «թերավի բազիկո-  
լա»: Մնկիկը հողում պահպանվում է 4—5 տարի: Հիմնա-  
կան վնասը, վոր այս հիվանդությունը հասցնում է ծխա-  
խոտին, կայանում է հետևյալում.—թերավիի սնկիկը զար-  
գանում է հիվանդ բույսերի արմատների վրա, հետզհետե  
փտեցնում է նրանց ու սևացնում: Հիվանդ, փտող արմատը  
աստիճանաբար վոչնչանում է և, յնթե բույսը չտա նոր,  
լրացուցիչ արմատներ, նա սնունդ չմտանալով, հետզհետե  
քայքայվում ու վոչնչանում է:

Սկզբներում այս հիվանդությունը գլխավորապես նկատ-  
վում էր ջերմոցներում, վորտեղ նա առանձնապես մեծ  
վնաս էր հասցնում սածիլներին: Սակայն վերջին տարի-  
ներս Մոչու ուսյունի կոլտնտեսություններն արմատափտու-  
մից մեծ վնասներ ունեցան հենց ծխախոտատուների տեղե-  
րում: 1931 թվականին Մոչու ուսյունում ծխախոտատուները  
սկզբում 3500 հեկտար եր: Ըստ Պետապի տեղական մար-  
մինների հետազոտության, ծխախոտացանքերի 30 տոկոսը

յինթարկվեց արմատափտումով վարակվելուն: Այսպիսով  
վնասվեց 1500 հեկտար, կամ ավելի քան 1000 տոնն ծո-  
վափնյա բարձր տեսակի ծխախոտ:

Դաշտերում արմատափտումի հասցրած վնասը դանազան  
է լինում: Ուժեղ վարակված բույսերի աճումը դանդաղում  
է, նրանք թոշնում են և վերջի վերջո փչանում: Ավելի  
քիչ վարակվածները կարողանում են լրացուցիչ արմատներ  
դրել, սակայն նույնպես դանդաղ են աճում և ուշ հասու-  
նանում: Հիվանդությունը զարգանում է ամառվա առաջին  
կեսին, վորովհետև չոր և շոգ յեղանակը խանգարում է սն-  
կիկի զարգացման: Հիվանդությունն առանձնապես ուժեղ է  
զարգանում ամուր և ծանր հողերում. ընդհակառակը, թեթև,  
լավ փխրացրած հողերում, նույնիսկ հիվանդության դեպ-  
քում կարելի յե բավարար բերք ստանալ, միայն թե ծխա-  
խոտը ուշ է հասունանում, վորովհետև բույսի լրացուցիչ  
արմատներ կազմվելու համար շատ ժամանակ է պահանջ-  
վում, վորոնք անհրաժեշտ են նորմալ սննդի և հետագա  
զարգացման համար:

Արմատափտումի սնկի դեմ հիմնական միջոցը այն է,  
վոր ծխախոտատուների ժամանակ պետք է ջոկել սածիլները:  
Հիվանդությամբ կասկածելի բոլոր սածիլները (սևացած,  
կամ փշաքած արմատներ ունեցող) դեն են դրվում ու վոչն-  
չացվում են: Դաշտային խնամքը—վարակված հողամասերի  
քաղհանք, մանր, խոնավ հողի կիտումը հետամնաց, հիվանդ  
բույսերի շուրջը—պետք է սկսել վաղ և անցկացնել շատ  
մեծ խնամքով: Դա մեծ մասամբ ոգնում է հիվանդ բույսե-  
րին կաղզուրվելու: Սակայն լինում են և ուժեղ վարակման  
դեպքեր և այդ միջոցներն արդյունք չեն տալիս: Այսպիսի  
դեպքերում հիվանդ բույսերը պետք է արմատախիլ անել և  
հեռացնել դաշտից:

Թերավիի սնկիկով սաստիկ վարակված հողամասերում  
հանձնարվում է ցանքսափոխության մեջ մտցնել հացաբույ-  
սեր և յեզիպտացորեն, վորոնցից հետո դարձյալ կարելի յե  
ծխախոտ անկել:

Թխախոսի սերեմներէ բժաւորութիւնը.— Թխախոսի տերեւներէ բժաւորութիւնը զանազան յերևույթներէ ու պատճառներէ արդունք եւ Այդ յերևույթներն ու պատճառները հետևյալներն են.— 1) անձրևային յեղանակին հանկարծակի չոր, արևային ու քամոտ յեղանակի հաջորդելը, 2) հողում մի վորևե սննդարար նյութի ծայրայեղ պակասութիւնը, կամ ընդհակառակը, ավելցուկը, 3) բույսի արմատների կամ այլ մասերի փչացման հետևանքով նրա նորմալ սննդառութիւն խանգարումը:

Վերոհիշյալ յերևույթներն ու պատճառները զուտ ողբերկւոյթաբանական եւ ֆիզիոլոգիական են: Բժաւորութիւն մի այլ դեպք վոր ավելի եյական եւ բերքին հասնող վնասի իմաստով,— առաջ եւ գալիս ծխախոտի հիվանդութիւնների (արմատափթոււ, սողախկա) հետևանքով: Վերջապես, բժաւորութիւնն առաջ եւ գալիս սնկիկներով, մակարոյծներով վարակվելուց:

Այս բոլոր մոմենտները փոփոխութիւնն են յինթարկում ծխախոտի տերևի կառուցվածքը: Ստացվում են ամեն տեսակ ձևեր եւ զանազան գույնի բծեր: Վարակված տեղերի հյուսվածքը մեղմում եւ եւ նայած թե ինչ չափով եւ վարակը տարածված, ստացվում եւ շայս կամայն վնասը եւ ցածրանում եւ ծխախոտի վորակը:

Տերևների բժաւորութիւնը լայն իմաստով կոչվում եւ եւ չեչոտութիւն, սակայն հարկավոր եւ տարբերել բակտերիային չեչոտութիւնը մյուս տեսակի չեչոտութիւններից, վորոնք վարակումից չեն սկիզբ առնում եւ առանձնապես չեն տարածվում:

Բակտերիային չեչոտութիւն: Սա առաջանում եւ մի սնկիկից վորը կոչվում եւ բակտերիում— քարակում: Այս հիվանդութիւնը ծխախոտի համար ամենավարակիչ ու ամենավրասնագավոր հիվանդութիւններից մեկն եւ: Անձրևային եւ քամոտ յեղանակին նա շատ արագ եւ տարածվում եւ մեծ վնաս հասցնում, վորովհետեւ բոլորովին արժեքազրկում եւ տերևների բերքատուութիւնը: Մնկիկի սպորներ տարեց-

տարի պահպանվում են բույսի չոր մնացորդների վրա: Հիվանդութիւնը հաճախակի սկիզբ եւ առնում սածիլանոցներում եւ այստեղից սածիլների հետ անցնում եւ գաշտ:

Սածիլանոցներում չեչոտութիւն դեմ պայքարելու միջոցները մենք արդեն թվել ենք շեմոցները նկարագրելիս: Հիմնական կանոնն այն եւ, վոր պետք եւ վոչնչացնել հիվանդութիւն ոչխալը, այրելով հիվանդ սածիլը, խիստ հիվանդ սածիլների հողամասի վրա շաղ տալ պղնձի արջասպի թուղ լուծվածք:

Այնուհետեւ հարկավոր եւ հիշել, վոր չեչոտութիւնը հիվանդ բույսերից չեչոտութիւնը անցնում եւ առողջներին՝ ձեռքերի, հագուստի եւ գործիքների միջոցով: Այս պատճառով պետք եւ պահպանել նախազգուշութիւն վորոշ կանոններ:

Չեչոտութիւնն առանձնապես զարգանում եւ խոնավ յեղանակին: Թե հողի եւ թե ողի ավելորդ խոնավութիւնը նպաստում են հիվանդութիւնն առաջանալուն:

Այն պայտացիաներում, վորտեղ պատահում եւ չեչոտութիւնը, չպետք եւ ծխախոտի դաշտային աշխատանքներ կատարել (քաղհան, բուկը տալը, յերկրորդական ճյուղերի կտրատումը եւ այլն) յերբ բույսը թաց եւ, քանի վսր վարակը տարածվում եւ հիվանդ բույսից առողջին անցնելով, խիստ զրոն նպաստում եւ խոնավութիւնը:

Չեչոտութիւնն ընդհանրապես վնաս եւ հասցնում ուշ տնկված ծխախոտին: Այս պատճառով ծխախոտի թե տունկը եւ թե հետագա դաշտային մշակութիւնը չպետք եւ ուշացնել:

Մագաիկ հիվանդութիւն: Այս հիվանդութիւնը չեչոտութիւնից պակաս վարակիչ չի: Նրա վնասն այն եւ, վոր պակասեցնում եւ բերքը եւ իջեցնում եւ ծխախոտի վորակը: Ծխախոտի տերևների վրա հիվանդութիւնն նշանները բազմատեսակ են թե ձևով եւ թե մեծութիւնով: Նրանցից գլխավորները հետևյալներն են.— տերևի վրա կանաչ գույնը ուղիղ եւ հավասարաչափ չեւ. ուռճացած, հիվանդ տերևները կարող են լինել վոչ նորմալ եւ բազմատեսակ ձևերով, վատ զարգա-

նալ, յերբեմն չեչտ լինել և չորացած ծայրեր ունենալ: Մոզահիկն այնքան վարակիչ է, — թեև մինչև այժմ չի հայտնաբերված նրան տուժացնող մեկիկը, — վոր բավական է վերցնել հիվանդ բուշտի հյուսթը և հաղորդել առողջին — և վերջինս կվարակվի: Բավական է ձեռք տալ հիվանդ բուշտին, ապա առողջին — և վերջինս իսկույն կվարակվի մոզահիկով:

Այս հիվանդութեան դեմ պայքարելու միջոցները նույնն են, ինչ վոր մենք հասնարարել ենք մյուս սնկային հիվանդութեաններին դեմ:

Բացի թվածներից, կան նաև մի ամբողջ շարք ուրիշ հիվանդութեաններ, վորոնք հավանաբար առաջ են գալիս մակիկներից և մակարույծներից: Մակայն մենք չենք թվի այդ հիվանդութեանները, վորովհետև նրանք բավականաչափ չեն ուսումնասիրված, ինչպես և չեն մշակված նրանց դեմ պայքարելու արմատական միջոցներ: Վերջացնելով այս գլուխը, պետք է ասել հետևյալը. — Իր ժամանակին կատարված քաղհանը, ծխախոտի պլանտացիաների փխրումն ու բուկը տալը, պրոֆիլակտիկ միջոցների խնամքով դործադրութեանը — այս բոլորը կվերացնի կոլումտեսութեանները ծխախոտի քանակի ու վորակի կորստները: Ծխախոտատուներին, քաղհանի, բերքառնավաքի ժամանակ անհրաժեշտ ազդրոտիխնիկական միջոցների դործադրութեանը հետզհետե կազատի կոլումտեսութեաններին թե ծխախոտի վնասատուներից և թե նրա գանաղան հիվանդութեաններից:

### ՅԵՂԱՆԱԿԻ ՎՆԱՍԱԿԱՐ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՅԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ ՄԻՍՈՒՈՏԸ ՆՐԱՆՑԻՑ ԴԱՇԵՊԱՆԵԼՈՒ ԿԱՄԱՐ

Բնութեան այն յերեվոյթները, վորոնք ծխախոտի բերքին վնաս են հասցնում և յերբեմն նույնիսկ բոլորովին վոչնչացնում են այդ բերքը, հետևյալներն են. — հորդառատ անձրևներ, կարկուտ, վոթորիկ, ուժեղ քամի, յերաշտ և ցորատ:

Ծխախոտի անկման համար հողամաս ընտրելիս պետք է աչքի առաջ ունենալ այն հանգամանքը, վոր բացի հողի հատկութեանից, դիրքից և այլն, շատ կարեւոր են նաև այն, թե վորտեղ է գտնվում այդ հողամասը: Ծխախոտատուներին համար ընտրված հողամասը պետք է բավարարի հետևյալ պահանջներին. —

Հողամասը պետք է պաշտպանված լինի հյուսիսային և հյուսիս-արեւելեյան քամիներից:

Պետք է խուսափել թեք լանջերից, վորովհետեւ հորդառատ անձրևի ժամանակ հեղեղը կտանի անկված ծխախոտը:

Պետք է խուսափել նաև ցածրադիր, խոնավ հողամասերից, քանի վոր առատ անձրևների ժամանակ այդպիսի հողամասերում ծխախոտը կարող է բոլորովին փչանալ: Բացի դրանից, աշնանային վաղահաս ցրտերից ծխախոտն ամենից շատ է վնասվում հենց այդպիսի հողամասերում, վորովհետեւ ցածրադիր վայրերում ջերմութեան աստիճանն ավելի ցածր է լինում:

Վորպեսզի թուլացնել այն վնասակար ազդեցութեանը, վոր բնութեան մի շարք յերեվոյթները թողնում են անկված ծխախոտի վրա, հողամաս ընտրելիս պետք է հաշիւ առնել նաև վերոհիշյալ մոմենտները:

Բացի դրանից, գործնականում կիրառվում են նաև բընութեան վնասակար յերեվոյթների դեմ պայքարելու մի շարք միջոցներ: Ծիշտ և, այդ միջոցները շատ չեն, նրանք լիովին չեն ապահովում ծխախոտի բերքի պահպանութեանը, սակայն, յեթե ընտրված հողամասը հարմար լինի, նըրանք վորոշ չափով ապահովում են, իսկ առանձին դեպքերում համարյա թե ամբողջովին պահպանում են ծխախոտի բերքը կորստներից:

#### 1. ՀՈՐԴԱՌՈՒՏ ՅԵՎ ԱՎԵԼՈՐԳ ԱՆՁՐԵՎՆԵՐ

Յերբ ծխախոտը անկվում է լանջերի վրա, — վորտեղ հեղեղը կարող է բշիւտանել հողը, ինչպես և բուշտերը, — վերին մասերում, ինչպես և ներքեւի մի շարք տեղերում

պետք է լանջի լայնությամբ փորել խանդակներ: Այդպիսի սով ծխախոտը վորոշ չափով կապահովվի հեղեղներից:

Հարթավայրերում, վորտեղ լինում է ջուրը դժվարությամբ ծծող կավախառն հող, ինչպես և բոլոր ցածրադիր վայրերում, վորտեղ հորդառատ կամ յերկարատեմ անձրեւների ժամանակ կարող են ջրի լճակներ գոյանալ ու յերկար մնալ—անհրաժեշտ է խանդակներ փորել ջուրը հոսեցնելու համար: Հենց վոր անձրեւը դադարի, պետք է շրջել ամբողջ դաշտը, ուղղել խանդակները և ջուրը դուրս հոսեցնել դաշտից:

## 2. ԿԱՐԿՈՒՏ

Ծխախոտի համար կարկուտը բնության ամենալինասահար յերեւոյթներից մեկն է, վորովհետեւ նա վիչացնում է տերեւներն, այսինքն՝ ապագա ծխախոտը: Այդ տերեւները, շնորհիվ իրենց խոշորության և նուրբ հույսվածքի, հեշտությամբ են վնասվում կարկտից:

Առանձնապես մեծ վնաս է հասցնում կարկուտը, յերբ թափվում է լրակատար հասունացած ծխախոտի վրա:

Այսպիսի դեպքերում, յեթե դեռևս ժամանակ կա յերկրորդական ճյուղերից բերք ստանալու, անհրաժեշտ է քաղել կարկտից վնասված բոլոր ցողունների վերին մասերը, վորքան կարելի յի ցածրից, մինչև առաջին սաղմերը, վորպեսզի վերջիններս վորքան կարելի յի շատ տերեւներ տան:

Փորձերը ցույց են տալիս, վոր համարյա բոլոր դեպքերում այսպիսով հնարավոր է լինում ստանալ յերկրորդական ճյուղերի բերք, վորը թեև վորակով ցածր է, բայց քանակով արդարացնում է վոշ միայն լրացուցիչ աշխատանքները, այլ և հիմնական աշխատանքների մի մասը, վորոնք կատարված են ծխախոտը անկելու ժամանակ:

Մտառը բույսերին կարկտի հասցրած վնասը համեմատաբար քիչ է և բարեհաջող պայմանների գոյության դեպքում հեշտությամբ է ծածկվում:

Ծխախոտի ամճան առաջին շրջանում կարկուտը վնասում է միայն այդ ժամանակ յեղած ստորին տերեւները, վորոնք ամենասակավ արժեքավոր են և նրանց կորուստը մեծ վնաս չի հասցնում:

## 3. ՓՈԹՈՐԻԿ ՅԵՎ ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ

Տնկված ծխախոտի համար ամենալավ և հուսալի պաշտպանությունը քամիներից՝ դա բնական պաշտպանություններն են—լեռներն ու անտառները:

Ինչպես վերելում ասված է, այս հանգամանքն անպայման պետք է հաշվի առնել ծխախոտատունկի համար հողամաս ընտրելիս: Այնտեղ, վորտեղ անկարելի յի ոգտը չկան այդ հարմարությունները, հարկավոր է մտածել ծրխախոտի արհեստական պաշտպանության մասին: Հյուսիսային կովկասի պայմաններում, այս բնագավառում գործնական աշխատանքը գրեթե բոլորովին բացակայում է, վորովհետեւ անցյալ տարիներում մանր անհատական տնտեսությունները, գտնվելով բնության նպատավոր պայմաններում (ծխախոտը գլխավորապես մշակվում էր յերկրամասի լեռնային ու անտառային մասում), չէին հետաքրքրվում և զբաղվում այդ հարցով:

Այժմ այդ պայմաններն արմատապես փոխվել են: Մենք ունենք խորհրդային ու կոլեկտիվ խոշոր տնտեսություններ, վորոնցից ամեն մեկը տնկում է ավելի քան 500—700 հեկտար ծխախոտ: Նրանց համար դժվար է գտնել համապատասխան բնական պայմաններ: Բացի դրանից, ծխախոտի մի զգալի մասը տնկվում է յերկրամասի հարթավայրերում, վորտեղ բնական նպատավոր պայմանները բոլորովին բացակայում են:

Ինչ պետք է անել ուրեմն այն զգալի վնասները կանխելու համար, վորոնք ծխախոտին կարող են հասցնել փոթորիկներն և ուժեղ քամիները: Անհրաժեշտ է միջոցներ

ձեռք առնել արհեստական արգելքներ ստեղծելու համար: Պետք է վնասակար քամիների հոսանքի լայնությամբ տրնակել կուլտուրական անտառներ: Ծխախոտադաշտի շուրջը պետք է ցանել այնպիսի մշակույթներ, ինչպիսին են, որինակ, յեղիպտացորենը, սորգոն:

Անհրաժեշտ է միայն այս կամ այն մշակույթները ցանելիս, այդ նպատակի համար թույլ չտալ այնպիսի մշակույթների ցանքս, վորը ծխախոտի հետ ընդհանուր վնասատուներ և հիվանդություններ ունի:

Որինակ, չի կարելի այդ նպատակով դործածել արևվածադիկը, վորովհետեմ մակարույծ բույսը—ճրագախոտը կարող է անցնել ծխախոտատուների դաշտը:

#### 4. ՅԵՐԱՇՏ

Հյուսիսային Աովկասի պայմաններում, վորտեղ ծխախոտադաշտերի արհեստական վոտոգում գոյություն չունի, յերաշտի դեմ պայքարելու գլխավոր, թերևս միակ միջոցը հանդիսանում է ծխախոտի սածիլների վաղ տունկը դաշտում, դաշտի ճիշտ մշակումը մինչև ծխախոտատունկը, ինչպես և շարքամիջերի լավ մշակումը ծխախոտի հասունացման շրջանում:

Դաշտում վաղ տնկված ծխախոտը, վորը սկսել է արմատավորվել և աճել, կարող է բավականաչափ դիմացկունությամբ և յերկարատեմ ժամանակով տանել յերաշտը: Սակայն դա կարելի յէ այն պայմանով, յեթէ շարքամիջերը մաքուր լինեն մոլախոտերից և հողի վերին շերտերը բավականաչափ փխրուն դրության մեջ լինեն:

Ուրեմն ծխախոտի բերքը յերաշտից պաշտպանելու համար պետք է կիրառվեն այդ յերկու պայմանները:

#### 5. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՎԱՂԱՀԱՍ ՅՐՏԵՐ

1930 թվականին Հյուսիսային Աովկասի հարավային սայոններում, հոկտեմբերի 3—5-ի առաջին աշնանային

ցրտերը վնասեցին դաշտում դտնված ծխախոտի ամբողջ բերքի ավելի քան 25 տոկոսը: Ծխախոտագործական կուտանտեսություններն ու պետությունը միլիոնների հասնող վնասներ ունեցան այդ ցրտերից:

1931 թվականին, սեպտեմբերի 27—28-ին յեղած ցրտերը նույնպես անդրադարձան յերկրամասի ծխախոտի ամբողջ բերքի 5—8 տոկոսի վրա, վորով կուտանտեսություններն ու պետությունը դարձյալ հսկայական վնասներ ունեցան:

Այս վաստերը բավական համոզիչ կերպով ցույց են տալիս դրությունը: Նրանք ցույց են տալիս, վոր թէ ծխախոտագործական սայոնների կազմակերպությունները և թէ բոլոր ծխախոտագործները—կուտանտեսականներն ու անհատականները թերագնահատում են ծխախոտի բերքի ցրտահարության վտանգը:

Ճիշտ է մենք մեր տրամադրության տակ դեռ բավականաչափ միջոցներ չունենք այդ վնասների հնարավորությունը կանխելու համար, սակայն շատ թէ քիչ բան անել համենայն դեպս կարելի յէ՝ ծխախոտը ցրտերի վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

Ամենանիշտ միջոցն այն է, վոր չպիտք է ծխախոտը սուսնիկել:

Յերկրորդ միջոցատումն այս բնագավառում—դա ծխախոտի լրիվ հովաքն է մինչև հոկտեմբերի 1-ը: Թեև 1931 թվականի որինակը ցույց է տալիս, վոր ցրտերը կարող են լինել նաև այդ ժամկետից առաջ, հետեմագետ տվյալ ժամկետում ծխախոտի բերքահավաքը դեռ ևս չի վերացնում ցրտերի հասցրած վնասները,—այնուամենայնիվ այստեղ ևս կարելի յէ շատ բան անել.—յեթէ ծխախոտագործության ազբոտեխնիկական սերսոնսյը և վորձառու ծխախոտագործները, վորոնք մի վորոշ տեղում յերկար տարիներով զբաղվում են ծխախոտագործությամբ,—հատուկ ուշադրություն դարձնեն այս խնդրին, հնարավոր կլինի յուրաքանչյուր առանձին դեպքում նախատեսել ցրտերի վրա

հասնելը և կամ շտապ կերպով հավաքել մնացած ծխախոտը, կամ թե նախադրուշացման միջոցներ ձեռք առնել:

Այստեղ խնարկե հարկավոր և շատ մեծ ձկունություն և քրտնաջան աշխատանք, վորոշ դիտողություն և վաղորոք պատրաստություն հանկարծակի ցրտերի դեմ:

Այգիներն ու բանջարանոցները ցրտերից պաշտպանելու համար հաճախ ոգտվում են ծուխ առաջացնելով. այս նույն միջոցը կարելի յե հանձնարարել ծխախոտազործներին: Սրա համար հարկավոր և ծխախոտադաշտերի ծայրերին վաղորոք լցնել հարդախոտն աղբ, կամ մի վորևե ուրիշ նյութ, վորը դանդաղ և այրվում և շատ ծուխ և տալիս:

Յրտերը հանկարծակի չեն գալիս և վոչ իլ որվա ամեն մի ժամին և ամեն տեսակ յեղանակի դեպքում, այլ սովորաբար լինում են սլարդկա և հանդարտ յեղանակին և նրանց իրիվանից կարելի յե նախատեսել:

Ահա հենց այսպիսի դեպքերում անհրաժեշտ և ծխախոտադաշտերում սահմանել հերթափոխություն և առավոտյան դեմ, ջերմությունն իջնելիս, պատրաստված նյութը վառել այն կողմից, վորտեղից նկատվում և թեկուզ ամենաճնչին քամի:

Այս բոլորը կատարելու դեպքում ծխախոտադաշտը ծածկվելում և ծխով, վորը և պահպանում և ծխախոտը մրսկուց:

Ա. ԾԽԱԽՈՏԻ ՎՈՌՈԳՈՒՄԸ ԴԱՇՏՈՒՄ

Հյուսիսային Կովկասի պայմաններում մինչև այժմ ծխախոտի դաշտային վտուղումը շատ քիչ և տեղի ունեցել:

Իաշտում ծխախոտը ջրելը, նպաստավոր լինելով բերքի ավելացման տեսակետից, ավելացնելով ծխախոտի տերևների կշիռն ու մեծությունը, մի փոքր վատացնում և ծխախոտի վորակը, մանավանդ չափից դուրս ջրելու դեպքում:

Ծխախոտի տերևը լինում և փխրուն և սակավ բուրումնալից:

Նախկին Կուբանյան շրջանի սահմաններում, մասամբ Սև ծովի ափերին հաճախ ծխախոտի համար պակասում և հողի խոնավությունը: Ահա թե ինչու ծխախոտը դաշտում ջրելու գործն անհրաժեշտ և դնել կանոնավոր հիմքերի վրա:

Յեթե առջ, ծխախոտազործական մանր, անհատական անտեսությունների պայմաններում դժվար եր այդ բանն իրականացնելու, ապա այժմ, խոշոր կոլտնտեսությունների և խորհանտեսությունների պայմաններում դա միանգամայն իրագործելի յե:

1929 թվականի չորային ամռան, Աբինսկայա գյուղում ծխախոտազործ Գոնչար Իվանովը մի փոքրիկ փորձ կատարեց ծխախոտը դաշտում վտուղելու համար: Նա յուրաքանչյուր առանձին բույսը ջրեց և ապա ջրված տեղը ծածկեց չոր հողով:

Այս փորձը լավ արդյունք տվեց, բայց անհայտ ֆնաց և չտարածվեց:

Ուշադրություն դարձնելով այս հարցի վրա, վտուղման հասարակ կառուցումներ սարքելով, կարելի կլինի ցանկալի արդյունքների հասնել, այսինքն չորային ամռան ստանալ ծխախոտի բարձր բերք, առանց վատացնելու նրա վորակը:



Վերջին յերկու տարում Ծխախոտագործական Ֆետական Ինստիտուտը, Բայրարսկի ծխախոտագործական խորհրդանստուծյան մեջ և Առևտրի փորձնական պլանտացիայում, ինչպես և Ղրիմի ու Անդրկովկասի ուրիշ վայրերում փորձեր կատարեց ծխախոտի դաշտերում արհեստական անձրև թափելու համար:

Յերկու տարվա այդ փորձերի հետևանքով ստացվեցին հետևյալ ավյալները.—

1. Արհեստական անձրևն զգալի չափով բարձրացնում է բերքը:

2. Ամենից հարմարն ու գործադրելին հանդիսանում է «Լանինդեր» սիստեմի անձրևաթափ մեքենան:

Այսպիսով կարելի չէ հանել այն գործնական յեղրակացությունը, վոր դաշտում ծխախոտը վոռոգելու պրորելմը հիմնականում արդեն լուծված է:

Անհրաժեշտ է շարունակել այս հարցի ուսումնասիրությունը, թե վոռոգման փորձեր կատարելով և թե հասարակ վոռոգման կառուցումներ գործադրելով ծխախոտագործական կոլտնտեսություններում:

Այդպիսի հասարակ վոռոգման կառուցումները հետևյալներն են.— արհեստական ջրանոցներ—լճակներ, ջրհորներ և այլն, վորոնցից ջուրը կարելի չէ սրսկել կամ բաց թողնել ծխախոտի վրա: Այս տարի խորհրդային կառավարությունը Հյուսիսային Կովկասի կոլտնտեսություններին բաց է թողել վոռոգման նպատակով 195.000 ուրբլու յերկարատե վարկ:

Ծխախոտագործական կոլտնտեսություններին մնում է ամբողջովին ոգտագործել այդ վարկը և այդպիսով, ոգտվելով պետության աջակցությունից, ցույց տալ վոր սոցիալիստական ծխախոտագործությունը միանգամայն ի վիճակի չէ ստանալ լավ վորակով և բարձր բերք ավող ծխախոտ:

Վոռոգել ծխախոտի դաշտերը, դա նշանակում է բուլեփկորեն լուծել բերքը բարձրացնելու խնդիրը:

Հյուսիսային Կովկասի ծխախոտագործական ուսյունների մեծ մասում ծխախոտը մշակվում է սակավ արգավանդ հողերում, վորոնք շատ լավ են ընդունում պարարտումը:

Պարարտվելու դեպքում այդ հողերն ապահովում են ծխախոտի բարձր բերքը: Այսպիսով ծխախոտագաշտերի պարարտման հարցը ամենակարևոր հարցերից մեկն է ծխախոտագործության մեջ:

Վերջին տարիներս մեծ չափով տարածվեց հանքային պարարտումը, այն է՝ սուպերֆոսֆատի բորակի և ծծմբաթթվուտային ամոնիայի գործադրությունը:

Փորձերի հիման վրա ընդունված են պարարտման հետևյալ նորմաները.— մեկ հեկտարի համար սուպերֆոսֆատ—320 կիլոգրամ, բորակ—200 կգ, կամ նրա փոխարեն 150 կգ. ծծմբաթթվուտային ամոնիա:

Սուպերֆոսֆատը և ծծմբաթթվուտային ամոնիան հողի մեջ լցնում են ծխախոտատունկից 7—10 որ առաջ և ապա հողով ծածկում—տափանով կամ բազմախոփ գութանով:

Բորակն իբրև հեշտությամբ ծնվող ազոտային պարարտանյութ, լցվում է 2 անգամ—յուրաքանչյուր անգամ միևնույն քանակությամբ:

Առաջին անգամ նա լցվում է ծխախոտատունկից առաջ տափանի տակ, կամ շարքիկներում, բույսերի տակ առաջին քաղհանի ժամանակ:

Յերկրորդ անգամ նա լցվում է յերկրորդ քաղհանի ժամանակ, դարձյալ շարքիկներում, յուրաքանչյուր բույսի տակ: Վորովհետև այդ ժամանակ տեղի չէ ունենում քաղհանը և հողը փխրացվում է, սելիտրան լավ է ծծվում հողում:

Բորակը կարելի չէ լցնել նաև հողի մակերևույթին, առանց հողով ծածկելու, վորովհետև նա հեշտությամբ և թափանցում հողի մեջ:

Անհրաժեշտ է մատնանշել, վոր ներկա տարում Հյուսիսային Կովկասի ծխախոտագործական ուսյունների համար

ներածվում է միայն սուպերֆոսֆատ, 520 տոնն քանակությամբ: Ադոտային պարարտանյութեր չեն ներածվում:

Իս չի նշանակում, վոր ներածվող սուպերֆոսֆատը չպիտի ոգտագործվի: Միայն սուպերֆոսֆատի գործածությունը հեշտացնում է աշխատանքը, քանի վոր մեր սածններից յերևում է, թե սուպերֆոսֆատը հողի մեջ լցվում է ձխախոտատուներից 10 որ առաջ:

Ապագայում ներածվելիք ադոտային պարարտանյութերը,—վորոնք իրենց հատկություններով մոտ են սելիտրային,—կամ թե հենց սելիտրան պետք է ձխախոտի դաշտում լցվեն քաղհանի, փխրացման, բուկը տալու աշխատանքների ժամանակ:

Իսկ մինչ այդ, յուրաքանչյուր կոլտնտնական պետք է մանրամասն ըմբռնե, թե յե՞րբ, ինչ՞պես և ինչ՞ դրուժյամբ պետք է հանքային պարարտանյութերը լցվեն ձխախոտի դաշտում:

Հանքային պարարտանյութերն զգալի չափով բարձրացնում են ձխախոտի բերքատվությունը և բարելավում են նրա վորակը: Այդպիսի հատկություն ունի և սուպերֆոսֆատը, թեկուզ և գործածվի առանց ադոտային պարարտանյութերի:

Հնգամյակի ավարտական տարում ամբողջովին ոգտագործել ձխախոտի հանքային պարարտանյութերը—անա ձխախոտագործական ուսյոնների և յուրաքանչյուր առանձին ձխախոտագործական կոլտնտեսականի անելիքը:

Գ. ԾԽԱԽՈՏԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՔԸ—ՅՈՒՂԻ ՎԵՐԱ-  
ԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպես հայտնի յե, մեկ հեկտար ձխախոտի սածիլներ ստանալու համար հարկավոր է ընդամենը 109 գրամ սերմ:

Իսկ մի հեկտար ձխախոտից, յեթե հավաքվեն սերմի բոլոր սուփիլները (վորոնք առաջ են բերում յուրաքան-

չյուր բույսի դույնի ներդաշնակություն) կարելի յե միջին թվով հավաքել 250 կիլոգրամ սերմ:

Այսպիսով Հյուսիսային Կովկասի 1932 թվականի ձխախոտատուների պլանը (կոլտնտեսություններում և չքավոր-միջակ մենատնտեսություններում—42,315 հկ. իսկ խորհրտնտեսություններում—3,125 հեկտար) կատարելու համար պետք է ունենալ 4,544 կգ. սերմ:

Իսկ ձխախոտատուների այդ տարածությունից կարելի յե հավաքել 9,088 տոնն սերմ, թեկուզ և ամենավատ պայմաններում:

Մինչև ամենավերջին ժամանակներս ձխախոտի սերմերը չեյին հավաքվում: Գոյություն ունեւ մի կարծիք, թե լավ վորակի հումուլթ ստանալու համար՝ ձխախոտն անպայման պիտի «ծաղկահատվի»: Ծխախոտի ծաղկահատման մասին բնք արդեն մանրամասն խոսել ենք «ձխախոտի դաշտային մշակումը» բաժնում: Ծխախոտային արդյունաբերությունը Համամիութենական Ինստիտուտի վերջին աշխատանքները ցույց տվին, վոր արգավանդ, կամ շատ արգավանդ հողերում տնկված ձխախոտը բոլորովին չպիտի ծաղկահատվի և դրանից նրա վորակը չի վատանում:

Ուրեմն նշանակում է, վոր այդպիսի պայմաններում միանգամայն հնարավոր է սերմերի հավաքումը, քանի վոր սերմերը կկարողանան հասունանալ բույսերի վրա:

Միյեմուռյն ժամանակ վոչ պակաս կարևոր են ԾԱՀԻ-ի աշխատանքները, վորոնք ցույց են տալիս, թե ձխախոտի սերմերը պարունակում են ճարպալից յուղ, վորը պատկանում է չորացող յուղերի թվին:

Ծխախոտի սերմից ստացվող յուղը կարող է գործածվել մի ամբողջ շարք տեխնիկական նպատակների և նույնիսկ կերակրի համար:

Ընթացիկ տարում ձխախոտի արդյունաբերությունը հավանորեն կմթերի ձխախոտի սերմեր, սրանցից յուղ ստանալու համար:

Ըստ ԾԱՀԻ-ի տվյալների, մի ամբողջ շարք ձխախոտա-

գործական աշխատանքներ (տես 5-րդ հավելվածը) ունեն ծխախոտի ցանքերի վորոշ տարածութիւն, վորտեղ ծաղկահատը պարտադիր չէ և կարող է ուշ կատարվել և ուրիմն միանգամայն հնարավոր է սերմերի հավաքումը:

Ծխախոտի սերմերի հավաքումը այն ճանապարհներից մեկն է, վորով պիտի լուծվի մեր Միութեան և համաշխարհային մի խոշոր հարց—հումութի ավելացումից յուր ստանալու համար:

### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՒ ԱՆՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՅԵՎ ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

1930 թվականին մեր յերկրամասում ծխախոտագործութիւնը համայնացված էր 75 տոկոսով, 1931 թվականին— 87—88 տոկ. իսկ ներկա 1932 թվականին համայնացումը կհասնի մոտ 95—96 տոկոսի: Ներկայումս ծխախոտագործութեան կոլեկտիվացումը չի ավարտված միայն մի քանի աղքատի մարդերում:

Այս հանգամանքը նախորդեց նաև յերկրամասի ծխախոտագործութեան կազմակերպչական և ագրոտեխնիկական սպասարկման ձևերը:

Կուսակցութեան ու կառավարութեան վորոշմամբ, յերկրամասում դուրսդատնետեսական կոոպերացիայի սիստեմը այս տարի վերացված է: Ծխախոտագործութեան ագրոարտադրական և կազմակերպչական սպասարկման համար կազմակերպված է Յերկրային ծխախոտագործական կոլեկտիվութեան սիստեմը, վորն ունի յերկրային վարչութիւն և ուսումնական բաժանմունքներ, հատուկ լիազորների գլխավորութեամբ: Վերջիններս միևնույն ժամանակ հանդիսանում են աշխատանքային կոլեկտիվութեան անդամներ:

Կոնտրակտացիան անցկացնելու, ծխախոտ մթերելու և ծխախոտագործական արդյունաբերութեան առաջնորդող դե-

րը այս ճյուղում իրականացնելու համար յերկրամասում կազմակերպված և «Ծխախոտահումութեւթ»-ի յերկրային գրասենյակ, վորը հանդիսանում է համամիութենական «Ծխախոտահումութեւթ» ավտոնոմ գրասենյակի բաժանմունքը, վորը (համամիութենական գրասենյակը) ստեղծված է վերոհիշյալ նպատակների համար—ծխախոտի ու մախորկայի համամիութենական միավորութեան—«Սոյուզտաբակին» կից:

«Ծխախոտահումութեւթ» և «Յերկրային ծխախոտագործական կոլեկտիվութեւթ» սիստեմներն իրար հետ կապված են յերկու հիմնական պայմանադրերով, վորոնց համաձայն առաջինը ֆինանսավորում և ոգնում է, իսկ յերկրորդն իրագործում է յերկամասի ծխախոտագործութեան կազմակերպչական և ագրոարտադրական սպասարկումը:

Կառավարութեան դերեկտիվներով և հիշյալ պայմանագրերով, այս յերկու սիստեմների ֆունկցիաները բավականաչափ սահմանավորված են և վերջ է տրված ծխախոտագործութեան սպասարկման մեջ յեղած այն դիմադրկութեան, յերբ այդ գործով զբաղվում էին մի քանի կազմակերպութիւններ և եյապես վոչ վոք պատասխանատու չէր:

Այսորվա խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի այդ յերկու սիստեմների մեջ հաստատվի իսկապես գործարանական առողջ փոխհարաբերութիւն, առանց յերկուստեք պաշտպանվելու թեքման, առանց նեղ հիմնարկային շահերի, վորոնք կարող են փնասել ծխախոտագործութեան զարգացման ընդհանուր շահերին, մի բան, վոր առաջ կարմիր թելի պես անցնում էր կոոպերացիայի և արդյունաբերութեան փոխհարաբերութիւններում:

Իրաջոններում, տեղերում ծխախոտի գիմազրկութեան դեմ պայքարելու նպատակով—վորտեղ անցյալ տարիներում կազմակերպութիւնները բոլորովին թերագնահատում էին ծխախոտի տնտեսական նշանակութիւնը,—ինչպես և հումութի քանակն ու վորակը բարձրացնելու նպատակով, այս տարի բոլոր կոլեկտիվութիւններում, վորոնք ունեն ավելի քան 10—15 հեկտար ծխախոտատունկ, կազմակերպվել են

ծխախոտի հատուկ ապրանքային ֆերմաներ: Հատուկ պայ-  
մանագրերի հիմունքով, նրանց տրամադրվել է բանվորական  
ուլժի, ինվենտարի և քաշուծի անհրաժեշտ քանակութիւնն:

Կուսակցութեան ու կառավարութեան այդ բոլոր միջո-  
ցառումները նպատակ ունեն ծխախոտագործական հիմնական  
ուսյո՞նների բոլոր կազմակերպութիւններին և կոլանտեսա-  
կանների ամբողջ մասսայի ուշադրութիւնը կենտրոնացնել  
ծխախոտի վրա, վորպէս մի կուլտուրայի, վորը չափազանց  
արժեքավոր և անհրաժեշտ է ծխախոտագործական արդյու-  
նաբերութեան և եկսպորտի կարիքները բավարարելու  
համար:

**Հասփածներ ագրոտեխնիկական կանոններից, վարձով վերաբե-  
րում են դեղին ծխախոտերին:**

Պարտադրարար սլիտի կատարվեմ 1932 քվին (Հաստատված են Հյուս, Կով-  
Յերկրգործկումի նախագահութեան կողմից):

**ՄԻԱԽՈՏԻ ԽՆԱՄՔԸ ԴԱՇՏՈՒՄ (ՔԱՂՀԱՆ)**

1. Առաջին ու յերկրորդ քաղհանի ժամանակ պարտադիր է տրակտո-  
րային և ձիու քաղհանիչների լայն գործածութիւնը (բացի այն հողամա-  
սերից, վորտեղ հնարավոր չէ կուլտիվատոր բանեցնել):

2. Առաջին քաղհանը և փխրացումը կատարել նայած դաշտի դրութեան  
բայց վոչ ուշ քան ծխախոտատունկից 10—15 որ հետո:

3. Յերկրորդ քաղհանը, փխրացումով և թեթեւ բուկը տալով հանդերձ,  
կատարել նայած դաշտի դրութեան, բայց վոչ ուշ, քան առաջին քաղհա-  
նից 10—15 որ հետո:

4. Պլանտացիան մուխոտերով լինատ ծածկված լինելու դեպքում,  
անպայման պետք է կուլտիվատորով վարել շարքամիջերը, իսկ հետո ձեռ-  
քով քաղհանել շարքերը:

**ՄԱՂԿԱՆԱՏ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԿՏՐԱՏՈՒՄ**

1. Մաղկահատը կատարել յերկու անգամից վոչ սլակաս: Արդավանդ  
հողերում ծաղկահատ չկատարել:

2. Յերկրորդական ճյուղերը կտրատվում են նրանց զարգացման հա-  
մընթաց, բայց մեկ անգամից վոչ պակաս:

Հասվածներ Հյուսիսային Կովկասի ծխախոսագործական խորհրդակցությունների յեվ կոլեկտիվությունների, ծխախոսագործական արդյունաբերության ու հասարակայնության 1932 թվի պարտեխնիկական հասվից:

ԾԽԱԽՈՏԻ ԽՆԱՍՔԸ ԴԱՇՏՈՒՄ

1. Առաջին քաղհանը փխրացումով հանդերձ, անպայման կատարել վոչ ուշ, քան ծխախոտատունկից 10—15 որ հետո:
2. Յերկրորդ քաղհանն անպայման կատարել արակտորային և ձիու կուլտիվատորներով և ձեռքի պլանետներով՝ իսկ շարքերում—ձեռքով (փեռատներով):
3. Յերկրորդ քաղհանը, փխրացումով և բուկը տալով հանդերձ, անպայման կատարել վոչ ուշ, քան առաջին քաղհանից 15 որ հետո: Յերկրորդ քաղհանի ժամանակ ևս պարտադիր և կուլտիվատորների գործածութունը:
4. Մոլախոտերի մեծ քանակութան դեպքում, յերկրորդ քաղհանը՝ բուկը տալով հանդերձ, պարտադիր և:
5. Յեթե հնարավոր և, անպայման պետք և կուլտիվատորներ դործածել շարքամեջերը մշակելին — նաև յերկրորդ քաղհանի ժամանակ:
6. Ծխախոտի ծաղկահատը տեղի յե ունենում նայած հողի զբության և յեղանակին—վոչ պակաս յերկու անգամից, տեղերի ազրո-տեխնիկական պերսոնալի ցուցումներով:
7. Յերկրորդական ճյուղերի կտրատումը կատարվում և նայած նրանց զարգացման—վոչ պակաս 2 անգամից, ազրո-տեխնիկական աշխատողների ցուցմունքների համաձայն:
8. Արգավանդ հողերում ծաղկահատ չի լինում: Սերմերը, հետզհետե հասունանալով, պետք և հավաքվեն և հանձնվեն վերամշակվելու և յուզ ստանալու համար:
9. Դաշտում ծխախոտի խնամքի բոլոր աշխատանքները պետք և կատարվեն իր ժամանակին և այդ աշխատանքների ընթացքում ծխախոտի ամբողջ բույսն ու նրա տերևները պետք և վնասվեն ամենաչնչին չափով:

Ծխախոտի դասային խնամքի առխառնակների վորակային ցուցանիշները

Աշխատանքներ	Տվյալ աշխատանքի ժամանակ բանեցվող գործիքներ	Վորակային ցուցանիշներ, վորոնք պիտի կատարվեն աշխատանքի ընթացքում:
Քաղհանը շարքերում, ձեռքով	Փետատ (քունկ)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ամբողջովին վոչնչացնել մոլախոտերը շարքերում, ուղղելով բույսերը և նրանց բուկը տալով:</li> <li>2. Մանրակրկիտ փխրացնել շարքերում, առանց բացատների և վնասելու բույսերն ու տերևները:</li> </ol>
Շարքամեջերի քաղհանավար	Տրակտորային կուլտիվատորներ, ձիու և ձեռքի պլանետ	<ol style="list-style-type: none"> <li>1. Պատրաստել ու սարքել կուլտիվատորը բանեցնելու համար, սրելով կտրող և փխրիչ մասերը:</li> <li>2. Կուլտիվատորի ճիշտ աշխատանքն առանց բույսերը կտրելու, նրանց հողով ծածկելու:</li> <li>3. Մոլախոտերի լրիվ վոչնչացում և շարքամեջերի փխրում:</li> </ol>
Ծաղկահատ		<ol style="list-style-type: none"> <li>1. Բույսերի վրա չթողնել շարքված մասեր:</li> <li>2. Ծայրամասերը կտրատելին այնպես անել, վոր ցողունները չարվեն:</li> <li>3. Այլ մասերը տանել դաշտի սահմանը (նրանց չթողնել բույսի վրա):</li> </ol>
Յերկրորդական ճյուղերի կտրատում		<ol style="list-style-type: none"> <li>1. Կտրատելին չվնասել տերևները:</li> <li>2. Ծիմացած յերկրորդական ճյուղերը չշարքել, այլ դատել ինչպես ցողունների ծայրերը (չթողնել սուր ծայրեր):</li> <li>3. Ամբողջովին դատել բոլոր յերկրորդական ճյուղերը, վորոնք պետք և վոչնչացվեն:</li> <li>4. Ջարդված յերկրորդական ճյուղերը տանել դաշտի սահմանը:</li> </ol>

Յ Ո Ւ Յ Ս Կ

Եվսխոսագործական ռաշոնների, յիվ նրանց արածուրյան չափը, վորից կտեղի յե ծխախոտի սեռմե հավաքել յուզ ստա- նալու համար

1. Սեղերյան . . . . .	300	Տեկտար
2. Ղրիմի . . . . .	2500	»
3. Կրասնոդարի . . . . .	1900	»
4. Տիմոշևյան . . . . .	800	»
5. Տիխոբեցկու . . . . .	300	»
6. Պավլովյան . . . . .	300	»
7. Բելորեչենի . . . . .	1400	»
8. Լաբինյան . . . . .	1200	»
9. Արմավիրի . . . . .	250	»
10. Կուրգանի . . . . .	150	»
11. Ուարադնենի . . . . .	150	»
12. Ադրգեյի . . . . .	800	»
13. Սլավյանյան . . . . .	1200	»
14. Մայկոպի . . . . .	500	»
15. Տեմըլուկի . . . . .	300	»
16. Նովոպալիբովյան . . . . .	200	»
17. Քրյուկովեցյան . . . . .	300	»
18. Վաննովյան . . . . .	100	»
19. Հունակալան . . . . .	100	»
20. Լեռ-Կլյուչևսկի . . . . .	350	»
<b>Ընդամենը 13,100</b>		»

Ա. բաղուրյի նորմաներ յիվ ախաթանի գործավարձային գր- նահատման ախաթերով:

№ ըստ կարգի	Աշխատանքի տե- սակներն ու պայ- մանները	Մեքենաներ	Նորակազմի արտա- թիվը	Հարկա- վոր են		Աշխատանքի պե- նաճատման աշ- խատանքի (1 հկ)	Աշխատանքի լավագույն ըստ գծվարձերի յիվ վորումն
				Ֆաշոյ ըստ ֆ	Կորյունե- սակների		
1.	Զիու քաղհանավար 60 ալ. լայնությամբ շարքամիջերում	Կուլտիվա տոր (ձիու և տրակտ)	2 հկ	1	1	0,50 0,37	Ծանր, հա- սարակ. Միջին
2.	Նույնը շարքամիջե- րի 70 ալ. լայնութ.	»	2,5	1	1	0,40	Ծանր, հաս. Միջին
3.	Լին քաղհանը շար- քերում, քաղհանա- վարից հետո, 60 ալ. շարքամիջերի լայն.	»	—	—	1	0,30	»
4.	Նույնը, շարքամիջե- րի 70 ալ. լայնութ.	Փետատ (ըլունի)	1	—	8	8,0	Ծանր, հա- սարակ.
5.	Յերկրորդ քաղհանը շարքերում, քաղհա- նավարից հետո,	»	1	—	6	6,0	»
6.	Նույնը, շարքամիջե- րի 70 ալ. լայնությամբ:	»	1	—	5	5,0	»
7.	Առաջին համատա- րած քաղհանը ձեռ- քով լեռնավայր.	»	1	—	4	4,0	Ծանր, հա- սարակ
8.	Յերկրորդը նույն պայմաններում:	»	1	—	15	15,0	»
9.	Յերկրորդը նույն պայմաններում:	»	1	—	12	12,0	»
10.	Յերկր. հյուղ. կըա- րատումը նախկին Կուրանի և Մայկոպի շրջաններում:	»	1	—	6	6,0	»
11.	Նույնը Սև ծովի ա- փերում:	»	1	—	8	8,0	»
12.	Մաղիանատը նախ- կին Կուրանի և Մայ- կոպի շրջաններում:	»	1	—	3	3,0	»
13.	Նույնը Սև ծովի ա- փերում:	»	1	—	4	5,0	Ծանր
14.	Նույնը Սև ծովի ա- փերում:	»	1	—	2	2,5	»



Առաջաբան . . . . .	2
Ներածութիւն . . . . .	5
Միախոտի դաշտային խնամքի նախապատրաստական աշխատանքները . . . . .	8
Միախոտի դաշտային մշակումը . . . . .	13
Միախոտի դաշտային մշակութիւնի մեքենայացումը . . . . .	28
Աշխատանքի կազմակերպումը և ուժերի դասավորումը քաղհանի համար և ծխախոտը դաշտում խնամելու դեպքում . . . . .	33
Քաղհանի ժամականամիջոցում ծխախոտի վնասատուների և հիվանդութիւնների դեմ կռիւնքը համար ձեռք առնելիք միջոցներ . . . . .	47
Յեղանակի վնասակար յերեկույթները և միջոցներ ծխախոտը նրանցից պաշտպանելու համար . . . . .	57
Լրացումներ . . . . .	63
Հյուսիսային կովկասի ծխախոտագործութիւնի կազմակերպչական և ազրոտեխնիկական սպասարկումը . . . . .	68
Հավելված 1. . . . .	71
Հավելված 2. . . . .	72
Հավելված 3. . . . .	73
Հավելված 4. . . . .	74
Հավելված 5. . . . .	75

57072

Ответственный редактор  
А. Г. Авакьян  
Технический редактор  
Ф. Т. Чиняков

№ 2505  
С-37

Сд. в набор 23/V—1932 г.  
Сд. в печать 10/VI—1932  
Объем 2<sup>3</sup>/<sub>4</sub> печ. листа  
Тираж 2000 экз

«Ազգային գրադարան»



NL0287817

18528

27072



На армянском языке

Г. Мелескериди, А. Мишарев, И. Кругляков

Полевая обработка табака

И-во „СЕВЕРНЫЙ КAVKAZ“

ԳՐԱԳԱՆՆԵՍԵՐ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍՎՈՎՅԱՆ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)